

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԹԱՐԻԽԱԿԻ

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ԱՐՄԵՆԻԱ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ

Ե.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության սեղմագիր

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Պաշտոնական ընդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Շովիաննիսյան Ն. Ռ.

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մովսիսյան Ֆ. Վ.

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ներսիսյան Ա. Ա.

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. մարտի 29-ին ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. փետրվարի 27-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, պ. գ. թ., դոցենտ

Մուրադյան Յ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: «Արմենիա» թերթի ու Մ. Փորբուգայսան գործչի բազմամյա գործունեության պատմության ու հայ քաղաքական մտքի անդաստանում ունեցած դերակատարության ուսումնասիրությունը ներ օրերում ունի գիտաճանաչողական և արդիական-քաղաքական նշանակություն: Թերթը Եվրոպական միջավայրում հայ ազատագրական պայքարի գաղափարախոսությունը տարածելով, Եվրոպայի հայության և Եվոպական հասարակությունները միմյանց կամրջելով, նոր մակարդակի բարձրացրեց հայ քաղաքական միտքը:

Ինչպես հարյուր տարի առաջ, այնպես էլ ներկա ժամանակաշրջանում, խիստ կարևոր ու սկզբունքային նշանակություն ունի սեփական դիրքորոշումների ու քայլերի հայաստանակենտրոն մեկնակետի հստակեցումը, որը պահանջում է ապագային միտքած ազգային-քաղաքական ծրագրերը կառուցել հայրենաբնակ հայության շահերի առաջնայինության հաշվառման սկզբունքի վրա: «Արմենիա»-ի ու նրա խմբագիր հայաստանակենտրոն մտածողության հաշվառման իրատեսական քաղաքականության որդեգրման կարևոր պայման է նաև մեր օրերում:

Մ. Փորբուգայսանի ու նրա թերթի գործունեության լուսաբանումը նպաստում է XIX դարի վերջին քառորդի ու XX դարի սկզբի հայ քաղաքական մտքի սայրարումների լիարժեք ընկալմանը. քանի որ դեռևս Վանում ունեցած գործունեության ընթացքում նա իրեն դրսնորել էր որպես իրապաշտ և լայնախոհ մտավորական, ում արևմտահայության ազատագրության ուղղությամբ քաղաքական մտածողության մեջ ուրվագծել էր իրատեսական նարտավարության տեսլականը: Պատահական չէ, որ նրա դաստիարակած երիտասարդության կողմից կանում ստեղծված «Արմենական» կուսակցության որդեգրած մարտավարությունն ու ռազմավարությունը խոստումնալից էին և առավել արդյունավետ, քանի որ հայոց ազատագրության հնարավիրությունը նախ և առաջ տեսնում էին սեփական ուժին ապավինելու, հայության համախմբան, գաղտնորեն զինվելու և նախապատրաստվելու մեջ: Ենոյ այդ մտայնությունն էլ հետագայում հայ ազատամարտի հաջողության բանավիճ դարձավ:

Մ. Փորբուգայսանի ժամանակաշրջանի հայ մամուլը ողողված էր ռոմանտիկ բնույթի քաղաքական-իրապարակախոսական հրապարակումներով: Դրանցում հայության ազատագրման և հայոց պետականության վերականգնման հարցն ավելի շատ փորձ էր արվում լուծված տեսնել մեծ տերություններին ապավինելու միջոցով: Մոտեցում, որն առկա է և խիստ քննադատելի նաև մեր օրերի համար, քանի որ հայության մեջ այսօր էլ լիարժեք հիմնավորված չէ այն համոզմունքը, որ հայ ժողովուրդն ու նրա պետականությունն առանց օտարին ապավինելու էլ կարող են հղորանալ և անրապանդել: Այսինքն՝ օգնում է հասկանալ, որ պետք է մինյանցից հստակ սահմանազատել ռազմաքաղաքական դաշինքները և կուրորեն ուրիշներին ապավինելու հայցակետերը:

«Արմենիա» պարբերականի տարաբնույթ հոդվածները կարող են նպաստել հայոց մեջ քաղաքական նոր մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը, այն մշակույթի, որ բանավեճերի կամ այլախոհության պայմաններում մատնանշում է հանդուժողականության ոգին, որովհետև դրանք ծնվում են հայոց քաղաքական ապագան ավելի լավ տեսնելու, քան սեփական հավակնությունների հենքի վրա: Գաղտնիք չէ նաև, որ ապագային միտքած ճիշտ ծրագրեր ունենալու և հստակ գործելու անհրաժեշտությունը պարտադրում է մեր պատմության սպիտակ թերթի

բացառումն ու ամբողջական և անխսալ ինացությունը, որը հնարավորություն կտա անցյալ սխալներից դասելու և առաջ ընթանալու հավասարակշրջաված ու հաստատում քայլերով: «Արմենիա» թերթի ինքնատիպ գաղափարախոսությունը կարող է կարևոր դեր խաղալ նաև մեր օրերում լայն տարածում գտած օտարամուտ քաղաքական շարժումների ու գաղափարական հոսանքների համեմատ ճշգրիտ ու առարկայական դիրքորոշումներ որդեգրելու և նրանց թերած աշխարհաքաղաքացիական հովերից ազգային նվիրական նպատակները պաշտպանելու գործում, ինչն ամենաին էլ չի բացառում ազգային ու համամարդկային արժեքների համադրության անհրաժեշտությունը:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Գիտականորեն լուսաբանված հիմնահարցերի ներկայացված շարադրանքի հիման վրա կարող ենք արձանագրել, որ ատենախոսության նպատակն է «Արմենիա» թերթում առկա հրապարակումների, արխիվային նորահայտ փաստերի, տպագիր սկզբնադրյուրների, հուշագրությունների, պարբերական մամուլի ու հիմնահարցը ներառող գիտական գրականության համակողմանի հետազոտման հենքով ներկայացնել հայ քաղաքական մամուլի առաջին սերնդի վար ներկայացուցիչ¹, 1885-1923 թթ. Մարտել քաղաքում Ս. Փորթուգալյանի խմբագրությամբ² լույս տեսած «Արմենիա» թերթի ամբողջական պատմությունը զուգորդելով այն իր ժամանակի կարևոր իրադարձությունների լուսաբանման հետ: Առանձնակի ուշադրություն ենք դարձել այն հարցին, թե ինչպիսի գարգացում ապրեց պարբերականը 1908 թ. հեղաշրջումից հետո և այդուհետ ինչպես սկսեց պատկերացնել արևմտահայության ապագան:

Ելնելով խնդրի ծավալուն լինելուց՝ վերլուծել ենք թերթի առավել կարևոր հրապարակումները, շրջանցել հիմնահարցին հապանցիկ անդրադարձած հեղինակներին, առավելապես օգտագործել թեմային առնչվող կազմակերպությունների ծրագրային փաստաթրեթը, հասարակական-քաղաքական և կուսակցական գրողների այն աշխատությունները, որոնք վերաբերում են «Արմենիա»-ին: Գրականության մեջ արծարծված մեզ համար անցնումնելի կարծիքները մերժել ենք մեր տեսակետների պողիստիվ շարադրանքով:

Ըստ ամենային արժևորել ենք հետազոտվող խնդրին նվիրված արխիվային վավերագրերն ու տպագիր սկզբնադրյուրները, հուշագրություններն ու ուսումնասիրությունները, շեշտադրել այն հարցերը, որոնք մեր կարծիքով ցայսօր ըստ արժանապույն չեն լուսաբանված պատմագիտական գրականության մեջ: Ուսումնասիրության առարկայի խորությամբ հետազոտման նպատակով համակարգային վերլուծության ենք ենթարկել մի ամբողջ խումբ շաղկապված և փոխայմանապորոտ հիմնահարցեր: Դրանք են՝

▪ XIX դարի վերջին և XX դարի առաջին քառորդին Արևմտյան Հայաստանում տիրող ծանր կացությունը և որպես այդ իրավիճակի օրգանական

¹ Մինչ «Արմենիայի» հրատարակվելը հայ հրականության մեջ լույս են տեսել «ազգային, քաղաքական և գուկան կամ բանասիրական» խորագիրը կողոյ 36 պարբերականները: Դրանցից 27-ի խորագիրը թեև սկսվում էր «քաղաքական բառով, սակայն իրականում միայն 1884-ից Թիֆլիսի Դաստակեցնի խորագիրը կողմից Սոսկվայում ընդամենը մեկ տարի լոյս տեսած «Ազատութեան Աւետաբերը»-ն էր Արևմտյան Հայաստան ազատելու կոչ անում, որին գտնարկեց նաև սոցիալիստական գաղափարախոսությունը, իսկ արևմտա-հայ իրականության մեջ ազատության խնդրները տևական ժամանակ բարձրացնում էր միայն «Արմենիա»-ն:

² Ս. Փորթուգալյանից հետո՝ 1921-1923 թթ., թերթը խմբագրել է Եղիշե Թորոսյանը:

շարունակություն՝ որակական նոր մակարդակի ազատագրական գաղափարախո-սության համեմատ գալը³,

▪ 1877-1878 թթ. ռուս-բռլբական պատերազմից հետո հայության համընդիմանուր հիասքափությունը մեծ տերություններից ու ազատության հասնելուն որպես նախապայման՝ սեփական ուժին կորնելու մտայնության աստիճանական կարևորությունը,

▪ Փորբուգայանի հայրենանվեր գործունեությունն ու արևմտահայության ազատագրության խնդիրներին և Արևմտյան Հայաստանի քաղաքական կարգավիճակի փոփոխության վերաբերյալ աշխարհայացքային մոտեցուները,

▪ Փորբուգայան-Արմենական կուսակցություն առնչությունները,

▪ 1908 թ. Երիտրության հեղաշրջան հետևանքով իրավիճակային նոր փոփոխությունները,

▪ Հայկական հարցին և մեծ տերություններին, հայ իրականություն գոյություն ունեցող թերություններին, ազգային կուսակցություններին, հայոց Մեծ եղենին, կամավորական շարժմանը և մի շարք այլ կարևոր հարցեր: Աշխատանքում առանձնահատուկ շեշտադրում է կատարվել «Արմենիա» թերթի առաջին տասնամյակի համարներին, եթե այն նոր «գաղափարների շտեմարան» էր, և բոլոր հրապարակուները տոգորված էին ազատախոհությամբ, պայքարի ոգով և ապագայի նկատմամբ լուսավոր հավատուու:

Ստենախոսության ժամանակագրական շրջանակները: Ատենախոսությունն ընդգրկում է հիմնահարցի տեսակետից ուղենիշային իրադարձություններով որոշակիացված ժամանակահատված՝ 1885-1923 թթ., այսինքն՝ «Արմենիա»-ի լույսընթացման բոլոր տարիները: Նշված ժամանակագրական հենքի վրա էլ քննարկվում են հայոց կյանքում տեղի ունեցած իրադարձություններին հասարակական մտքի դիրքորոշումների վերաբերյալ թերթի լուսաբանություններն ու տեսակետները: Ներկայացրել ենք 1877-1878 թթ. ռուս-բռլբական պատերազմից հետո Արևմտյան Հայաստանում ստեղծված սոցիալ-քաղաքական ծանր կացությունը: Վախենալով այստեղ էլ տարածքային կորուստներ ունենալուց ու, հատկապես հայ ժողովորդին անբարեհույս համարելով՝ իշխանությունները որդեգրեցին բռնաճնշումների քաղաքականություն: Որպես դրա անմիջական հետևանք ու պատասխան, ինչպես նաև ազգային զարդումի, սեփական հայրենիքն ազատ տեսնելու հասունացած ցանկությունն իրականացնելու նպատակով հայ ժողովորդը ուժի ելավ ազատագրական պայքարի, որի սկզբնական փուլը դրսարվեց մտավոր զարթոնքի և

³ Դեռևս XIX դարի առաջին կեսին այդամիտ գաղափարախոսություն արևմտահայ իրականության մեջ արդեն առկա էր: Եվլոպական ճճշվող ժողովուրդների XIX դարի առաջին կեսի ազգային-ազատագրական պայքարի անմիջական ազդեցության նորոք 1850-1860-ական թթ. ծևավորված հայ հասարակական հոսանքների ներկայացուցիչները (Ստ. Ռուկանյան, Ս. Մամուրյան, Յ. Սվաճյան, Գ. Չիլմելիրյան, Ս. Պեշիկբաշյան և այլք) իրենց աշխատություններում և հրապարակուներում անդրադարձում էին արևմտահայության ազատագրության խնդիրներին, փորձում էին ուղիներ մատնանշել և անզամ պայքարի էին կոչում Երիտասարդությանը: Ավելին, դեռևս XIX դարի սկզբին Կենետիկի Միսիսիպի միաբանության անդամ Դուկաս Վլոդ. Ինճիճյանը («Ազգաւեր» (1815թ.) և «Ղարապատում» (1824-1827թք.) հրապարակախոսակամ աշխատություններում ոչ միայն արժարությ էր հայրենասիրության և ազգասիրության թեման, այսև ընդգծելով իտալացիների ազատափրության ուղեգծի ճշմարտացիությունը՝ «արյան մեջ թարախված Հայաստանի» զավակներին հորդորում էր հետևել իտալացիների օրինակին, կոչ էր անում ազգային միասնության, համախմբվածության և հայրենասիրության:

կրթալուսավորական շարժման տեսքով: Այդ գործում նշանակալի դերակատարություն ունեցավ Փորբուգայանը, ով, խուսափելով ձերքակալությունից, հեռացավ Երևան և 1885 թ. Մարտելում մկսեց հրատարակել «Արմենիա» թերթը:

Ուսումնասիրությամ մեթոդաբությունը: Հետազոտության մեթոդաբանական հիմքում մեր կողմից ուսումնասիրված աղբյուրների և գիտական գրականության համեմատական ուսումնասիրությունն է: Հետազոտության մեջ շարադրանքի հաջորդականությունը պայմանավորված է ժամանակագրական և թեմատիկ սկզբունքով: Ուսումնասիրության պատմահամեմատական մեթոդի կիրառումը հնարավորություն է ընձեռել շատ դեպքերում նորովի լուսաբանելու բազմաթիվ հիմնախնդիրներ և որոշակի առաջարկություններով նայաստելու դրանց արդյունավետ ընկալմանը: Աստենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած է «Արմենիա» թերթի պատմության և նրանում առկա կարևորագույն հրապարակումների անկողմնակալ ու անաչառ հետազոտության սկզբունքը:

Ստենախոսության գիտական նորույթ ու գործնական նշանակությունը: Ընդհանրացմելով աստենախոսության մեջ լուսաբանված պատմագիտական նորույթ հանդիսացող հիմնախնդիրների ներկայացումը՝ կարող ենք որոշակիորեն արձանագրել, որ հետազոտության հիմնական անվիճելի գիտական նորույթը վաստակաշատ նոտավորական Ս. Փորբուգայանի կյանքի, հասարակական-քաղաքական գործունեության և դրա զարդարական կարևորագույն հրադարձությունների անմիջական առնչությունների խորապատկերում և «Արմենիա» թերթի որպես այդ հրողությունների տարեգիր, արձագանքների և արտահայտած տեսակետների հոլովույթով: Ուսումնասիրության նորույթն անփոփ ձևով ունի հետևյալ տեսքը.

ա) առաջին անգամ ներկայացվում են Սկրտիչ Փորբուգայանի կյանքն ու գործունեությունը և «Արմենիա» թերթի ամբողջական պատմությունը,

բ) վերլուծվում են «Արմենիա» թերթում տեղ գտած կարևորագույն հրապարակումները, և այդ հենքի վրա ցույց է տրվում, որ պարբերականն արևմտահայ կյանքի տարեգիրն էր, իրականության անեղջ հայելին,

գ) լուսաբանվում և շրջանառության մեջ են դրվում նոր տեղեկություններ ու փաստեր թերթի սկզբնավորման, գործելակերպի հիմնական ուղղությունների և օսմանյան բռնատիրության դեմ պայքարի ներողների և ծների մասին,

դ) լուսաբանվում են թերթի կատարած ծավալուն աշխատանքները Եվրոպական հասարակությանը հայոց խնդիրն տեղեկացնելու ուղղությանը և այն, որ թերթը հայ ազատագրական պայքարը Եվրոպայից կախյալ համարելու ռազմավարությունը համարում էր անարդյունավետ,

ե) ներկայացվում է Հայկական հարցի վերաբացման իրողությունը, և մանրամասն քննարկվում են նրա լուծման տարբերակներն ըստ թերթի նյութերի,

գ) լուսաբանվում են Հայկական հարցը ցեղասպանության միջոցով լուծելու և այն օրակարգից համելու օսմանյան իշխանությունների կանխակալ ծրագրերը,

է) Հայաստանի անկախության և խորհրդային շրջանի առաջին տարիները, թուրք-հայկական հարաբերությունները և որոշ ռազմաքաղաքական իրադարձություններ լուսաբանվել են թերթի հրապարակումների հենքի վրա:

Ատենախոսությունն ունի ոչ միայն գիտական, այլև կիրառական նշանակություն: Անժմխտելի է, որ հասարակության և պատմության «Պարույրածե» զարգացման տեսությունը⁴ հայ ժողովորի պատմության դեպքում քննություն է բռնում: Հետևապես, այդ հենքի վրա կատարված վերլուծությունների արդյունքում կատարված եղանակովանը հայաստանի անկախ պետականության կայացման գործներացի շարունակականության պայմաններում ձեռք են բերում գործնական նշանակություն, հատկապես անցյալում թույլ տրված միաները հասկանալու և դրանք կրկնելուց գերծ մնալու առումով: Ատենախոսությունն ունի նաև պատմաճանաչողական կարևոր նշանակություն, քանզի կարծում ենք, որ հետազոտության արդյունքները պահանջված են հայ ժողովորի նոր շրջանի պատմության, մասնավորապես՝ քաղաքական մամուլի, ազգային կուսակցությունների, ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության, սեփական ժողովորի ազատության պայքարի նվիրյալներին վերաբերող հարցերն ուսումնասիրուների կողմից: Դրանք կարող են օգտագործվել նաև բուհական ու դպրոցական դասագրերում կամ դասավանդելու ընթացքում:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդում: Այն քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել նույն ինստիտուտի նոր պատմության բաժնի նիստում:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են հայերեն և ռուսերեն մենագրություններ, հոդվածներ հայրենի և արտասահմանյան գիտական պարբերականներում, կարդացվել են գեկուցումներ գիտական նստաշրջաններում:

Նետազոտության աղյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը: Թեմայի գիտական լուսաբանման համար բացարկի կարևորություն ունեն «Արմենիա»-ում լույս տեսած հոդվածները, արխիվային նյութերը, տպագիր սկզբնաղյուրները, հուշագրությունները, մամուլի հրապարակումները և հետազոտության մեջ արժարժված այլ հարցերի վերաբերող գիտական գրականությունը:

Թեմայի գիտական լուսաբանման համար բացարկի կարևորություն ունեն «Արմենիա»-ում հրապարակված նյութերը, հատկապես Ս. Փորբուգայյանի հեղինակած ծրագրային բնույթի խմբագրականները⁵, քանի որ «Արմենիա»-ի ու Ս. Փորբուգայյանի վերաբերյալ արխիվային վակերագրերն այնքան էլ առատ չեն: Օգտագործել ենք նյութեր նաև որոշ էլեկտրոնային կայքերից⁶, ինչպես նաև

⁴ Ժամանակակից ամերիկացի հոգեբան Թիեր Գրեյվսի արժեքների էվոլյուցիայի մասին հասարակության և պատմության «Պարույրածե» զարգացման տեսությունը վերաբերում է մարդու և հասարակության զարգացման դիմանմկային: Այլ տեսության օրինաչափություններն ու սահմանումները քննություն են քննում նաև հայոց պատմության զարգացման գործներացման ուսումնասիրելու ժամանակ, տե՛ս Դօն Էդվարդ Բեկ, Կրիստոֆեր Կ. Կոոն, Սպիրալնայ դինամիկա. Սորալյան գործառնություններում, տե՛ս Հայոց պատմության զարգացման ժամանակակից հոգեբան Մարտին Մարտինով, 2010.

⁵ Թերթի որոշ խմբագրական պահպան են ՀՀ ազգային գրադարանում, Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում /ԳԱԹ/ և Ս. Մաշտոցի անվան Մատենադարանում: Որոշ մասն է՝ Թբիլիսի Զավախիչվիլու անվան համալսարանական գրադարանում, որոնք ֆոնդագրված չեն և որպես անմշակ նյութ՝ գրանցված են գՏ-58 համարի ներքո: «Արմենիայի» որոշ համարներ էլ գտնվում են Վիեննայի Միջիբարյան միաբանության գրապահոցներում, տե՛ս ֆ. 1.254, ֆ. 1.255 և ֆ. 1.155:

⁶ Wikipedia.com, Hy.wikisource.org, Editions. sigest. Net, www.azator, gr/yushatetr/.

հիմնահարցին առնչվող փաստագրական վերլուծական հայերեն⁷, ռուսերեն⁸, անգլերեն⁹ և թուրքերեն¹⁰ ժողովածուներից:

Թեմայի գիտական լուսաբանման համար աղբյուրագիտական հիմք են ծառայել արխիվային նյութերը, որոնք թեև շատ չեն, սակայն լույս են սփռում հիմնահարցի բազմաթիվ կողմերի վրա: Կարևոր են հատկապես Հայաստանի ազգային արխիվի¹¹, Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարանի¹², պետական պատկերասրահի¹³ մի շարք ֆոնդերի նյութերը:

XIX դարի վերջի և XX դարի առաջին տասնամյակների հայոց պատմության իրադարձություններով հարուստ ժամանակահատվածը հաճախ է դարձել ուսումնասիրության առարկա, գրվել են մեծաքանակ և բարձրարժեք պատմագիտական աշխատություններ, որոնք որոշ վերապահումներով մեզ համար եղել են ուղենչային¹⁴: Ժամանակաշրջանի տարրեր հիմնախնդիրներ

⁷ «Արմենիա»ի յուշարար, Ա տարեկան (1885-86), Մարտել, 1890, Հայաստանը բուրժուական դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթրերուն (1828-1923), Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե., 1972, Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (փաստաթրերի և նյութերի ժողովածու), Ս. Ներսիսյանի խմբագրությամբ, Ե., 1991, Կրօնեական կազմակերպություն, ՈՎԿ հիմնական ծրագրեր, կանոնագրեր և վաւերագրեր, Պեյրուր, 1988, Ծրագրեր և կանոնագրի Գաղափարակցական միութեան (Արմենօ-միութեական միացեալ կազմակերպութիւն), Լոնտոն, 1907, Հայ պարբերական մանուլը, նատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980, կազմեց Բարլոյան Ա., 1986, Հայ պարբերական մանուլի նատենագիտություն (1794-1967), Համահավաք ցանկ, կազմեց՝ Ա. Կիրակոսյան, Ե., 1970:

⁸ Армянский вопрос и геноцид армян в Турции 1913-1919, сост. В. Микаелян, Е., 1991, Положение Армении в Турции до вмешательства держав в 1895 г., Москва, Тип. "Рассвет", 1896, Черная книга, Знаменитые иностранцы о турецких преступлениях конца XIX века и о геноциде армян в Османской империи в 1915 году, составитель А. Исоян, Е., 2012.

⁹ British Documents on the Ottoman Armenians, Ankara, 1989, pp. 547-550 pages.

¹⁰ Documents Diplomatiques Ottomans: Affaires Armeniennes (ed. by Bilal Şimşir), vol. 1 (1886-1893). Ankara, 1985.

¹¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ.ֆ. 51, 121, 190, 408, 420, 424, 427, 453, 1267, 1456 և այլն:

¹² Տե՛ս ԳԱԹ, ֆ.ֆ. «Ա. Արփիարյան», «Ա. Չոպանյան», «Ա. Բարխուդարյան», «Գ. Լևոնյան», «Հավաքածու սիյուռնահայ գրողների և մտավորականների», «Ա. Հովհաննիսյան», «Վ. Մալեզյան», «Բ. Նավասարդյան», «Ա. Փորրուզայն», «Ա. Հայկումի» և այլն:

¹³ Հայաստանի պետական պատկերասրահ, հուշաձեռագրային բաժն, ֆ. 60, տ. 11, թղթ. 27, 28: Թերեմեցան Փ., Կյանքիս հուշերը (մերենագի): Մի քանի արժեքավոր վավերագրեր է ձեռք ենք թերել մեր սիյուռնահայ բարեկամների օգնությամբ:

¹⁴ Լեռ. Թուրքահայ հետափիտության գաղափարաբանությունը, հ. Ա, Ե., 1994, Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Ե., 1997, Միմնյան Հ., Անդրամիկի ժամանակը, Ե., 1996, նոյնի՞ Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991, Գալյոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Ե., 1999, Գիւղալեան Գ., Պատմական խնդիրներ, Ս. Փորրուզալեան (մի էջ յեղափոխական մտքի պատմությունից), Պեյրուր, 1937, Ներսիսյան Ս. Հայ ժողովորի պայքարը թուրքական բռնատիրության դեմ, Ե., 2002, Խաւասոյան Ա., Արևմտահայ հասարակական նոտիք և հրապարակի ժամանակակից պատմությունից, Ե., 1980, Համբարյան Ա., Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության պատագրության ուղիների մասին, Ե., 1990, նոյնի՞ Ազատագրական շարժմանները Արևմտյան Հայաստանում (1898-1908), Ե., 1999, Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Ե., 2005, Կարդաման Հ., Արևմտահայերի պատագրության հարցը և հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Ե., 1967, Սարուխանյան Ն., Հայկական հարցը միջնադարության հասարակական քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Ե., 1997,

քննարկելս դրանց հեղինակներն անդրադարձել են նաև «Արմենիա» թերթին ու Ս. Փորբուգայանին: Այդ աշխատությունները պայմանականորեն բաժանել ենք չորս խմբի՝

ա) մինչխորհրդային, բ) խորհրդային, գ) հետխորհրդային շրջանում և դ) Սփյուռքում գրված ուսումնասիրություններ:

Մինչխորհրդային շրջանում «Արմենիա» թերթին նվիրված աշխատություն մեզ հայտնի չէ: Սակայն քննու առարկա ժամանակաշրջանին նվիրված այն ուսումնասիրություններում, որտեղ խոսվում է Փորբուգայանի մասին¹⁵, անդրադարձներ կան նաև «Արմենիա»-ին: Դրանց բնորոշ է այն, որ թերթի և խմբագրի մասին միայն գովեստի ու գնահատանքի խոսքեր են: Հավանաբար դա պայմանավորված է հորելյանների առիթներով գրված լինելով: Սակայն եական դերակատարություն է ունեցել նաև Ս. Փորբուգայանի և նրա «Արմենիա»-ի լուրջ ավանդը հայոց զարթոնքի ու ազատագրական պայքարի գաղափարախոսության նշակնան գործում:

Վաճի վարժապետանոցի նախկին սան Պ. Թորոսյանը, անդրադարձնալով Փորբուգայանի 40-ամյա գործունեությանը, բարձր է գնահատել նրա ներդրումը հայությանը կրթելու, համախմբելու և պայքարի կոչելու գործում: Համարելով նրան աննկուն կամքով օժտված «լուսաւորութեան անդրանիկ կամաւոր զինոր»՝ հեղինակը շեշտում է, որ Փորբուգայանը «վիատուած հայութեան մէջ ինքնավսո-տահութիւն» ներշնչողներից առաջինը եղավ, «40 տարի ան տքնած է Հայը իւր դարեւոր թնորութենէն սթափեցնել»¹⁶ և իր աննկուն կեցվածքով վարակել շատերին:

Փորբուգայանի գործունեության 40-ամյա և «Արմենիա»-ի հրատարակության 25-ամյա հորելյանների առթիվ ժամանակի նշանավոր նոտավորականների հեղինակած հոդվածների փաստառատ ժողովածով¹⁷ հարուստ է գնահատանքի խոսքերով: Հեղինակները¹⁸ մեծարում են նրան «Նվիրյալ մանկավարժ», «Լայմա-խոհ հրապարակագիր», «Կրօստ հայրենասեր» ու այլ բնորոշումներով և իրավացիորեն ընդգծում, որ նա իր հավատի ուժով հայությանը թարմ լիցր ներարկեց:

Ղազարյան Յ., Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Ե., 2001, Կոչար Մ., Արմաно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос, Е., 1988, Саркисян Е., Политика Османского правительства в Западной Армении: державы в последней четверти 19-ого и начале 20-ого вв., Е., 1972, 1967, Барсегов Ю., Геноцид Армян Ответственность Турции и Обязательство мирового сообщества, документы и комментарий, том 1, М., 2002 и том 2, М., 2005 և այլն:

¹⁵ Թորոսեան Պ., Ո՞վ է Սկրտիչ Փորբուգալեան, Կ. Պոլիս, 1912, նոյնի Քառասուն տարուան աշխատարոր, Կ. Պոլիս, 1914, Կարամելեան Ս., Հայկական շարժման նախապատմութիւնը, հ. 1, հ. 2, մնկ, 1912, Պագիլ Խան, Քառասուն տարի, Կ. Պոլիս, 1914, Կասիլեան Պ., Յոթելեարը եւ Արարատեան ընկերութիւնը և ուրիշներ, Կ. Պոլիս, 1918, Սապահ-Գիլեան Ս., Պատասխանատուուները, Փրովինտնս, 1916, Կարապետեան Գ., Սօսաւոր անցեալի յիշատակներէն, Կ. Պոլիս, 1919, Ա-Ռո, «Մեծ դեպքերը Կասպուրականում 1914-1915 թթ.», Ե., 1917, Մյամիկեան Ա., Ազգային հարցի առթիվ, Սոսկվա, 1919, Աճառեան Յ., Տաճկահայոց հարցի պատմութիւնը, Նոր Նախիջան, 1915 և այլն:

¹⁶ Թորոսեան Պ., Ո՞վ է Սկրտիչ Փորբուգալեան, Կ. Պոլիս, 1912, էջ 9:

¹⁷ Կենսագրական գծեր, Քառասուն տարուան աշխատարոր, Կ. Պոլիս, 1914:

¹⁸ Աշխատանքը չժանրաբեռնելու համար ձեռնպահ ենք մնում բոլոր 23 հեղինակների անուն-ազգանունները թվարկելուց:

Մինչխորհրդային շրջանում զգալի թիվ են կազմում կուսակցական գործիքների աշխատությունները¹⁹: Դրանցում Փորբուգայանը համարվում է ազատագրական պայքարի գաղափարախոսության մշակող, կրթալուսավորական գործի կազմակերպիչ և ժողովրդին ազատագրական պայքարի մղող գործիչ: Իսկ ՀՅԴ տեսաբան Միքայել Վարանյանը, ներկայացնելով նշված ժամանակաշրջանում հայերի վերագարբնումի գործընթացը, համարում է, որ այդ շարժման ողբերգ մինչև պայքարի հրավիրող գործիքները դարձան «այն ժամանակվա հայութեան խիզճը»²⁰: Իսկ այդ սերնդին համարում է ազատագրական շարժման «ուժ-գաղափարի», «խթան-գաղափարի» ստեղծիչ²¹: Այս որակումները, անկանությամբ, վերաբերում են նաև Ս. Փորբուգայանին:

«Արմենիա» թերթի մասին մինչխորհրդային շրջանում զգալի թվով հրապարակումներ կան ժամանակի մանուկում: Կ.Պոլսում լույս տեսնող «Աւետարեր»²² շաբաթաթերթը «Ո՞վ է Փորբուգալեան» խնբագրականում մեծարում է Ս. Փորբուգայանին «անձնուէր հանրային գործիչ», «բարի յեղափոխական», «առաջինն ում քարոզը կը հասկնար ժողովորդ» արտահայտություններով, ում խոսքը զուլալ առվակի նման «լուալով հանդերձ սխալ գաղափարներ, բարձր խուեաներ դիւրամարս կընէր»²³: Այնուհետև իրատեսորեն ընդգծվում է, որ փառասիրությունը նրա մեջ խապար բացակայում էր և առանձնացնելով պարզ ու հստակ գրելածը՝ ներկայացնում, թե ինչպիսի հմտությամբ էր նա մերժում ընդդիմադիրների հիմնագործությունը: Այնուհետև հեղինակը վկայակոչում է «Արմենիա»-ի բանաձևած մի կարևոր դրույթը: «Ոչ մի Դայ իրաւունք ունի ըսելու թե ինք բան մը չկրնար ընել խեղճ ազգին համար: Մինչեւ անգամ եթե աղմեք զրո մը ըլլաս, գոնե կրնաս 1 արժող Դայ եղօրոյ մը քով կայնելով՝ 10 շինել»²⁴:

«Ազատ բեմ» պարբերականն էլ է հեղափոխական առաջին սերնդի ու նրանց գաղափարախոսների մասին հիացմունքով խոսում: Միանգանայն համամիտ ենք թերթի հայտնած այն կարծիքին, որ որտեղ խմորվում էին հեղափոխական գաղափարներ, որտեղ մտադրություն կար զբաղվելու Դայաստանի ազատագրության խնդիրներով, բնավորությամբ մեղմ, մարդասեր Ս. Փորբուգայանն այստեղ էր: Ա. Արփիհարյանի բնորոշմամբ «Փորբուգալեանը ազատութեան շունչ մը փշեց ամբողջ Վանի վրա: Առանց Յեղափոխութիւն բան արտասանելու յեղափոխական սերունդ մը պատրաստեց Վասպուրականում»²⁵:

¹⁹ Արամեանց Դմ., Վերածնունդի երկունքը, Կ. Պոլսի, 1918, Ղարածեան Գ. (Արկոմեդ), Անցեալի յիշողութիւններից, Թիֆլիս, 1918, ճամկութեան Հ., Յիշատակներ հայկական ճգնաժամնեն, մաս Ա, Կ.Պոլսի, 1913, Սապահ-Գիլեան Ս., Ինքնաւար Դայաստան, Կ. Պոլսի, 1915, նույնի՝ Պատասխանատունները, Կ. Պոլսի, 1916, Վարանդեան Ս., Դայկական շարժման նախապատմութիւնը, Ժնև, 1912, Դ 1 և Շ. 2 և այլն:

²⁰ Վարանդեան Ս., Դայկական շարժման նախապատմութիւնը, Ժնև, 1912, հ. 1, էջ 13:

²¹ Նույն տեղում, էջ 14:

²² «Աւետարեր» Ամերիկյան միսիոներաց ընկերության պարբերականը լույս է տեսել Կ.Պոլսում 1855-1915 թթ. նախ որպես երկարաթերթ, ապա՝ անսաքերթ: Պարբերականի խմբագիրներ են Եղիշէ Զ. Գիլնը, Շ. Բարնը, Գ. Սեբալը, Ե. Բիսը և ուրիշներ:

²³ «Աւետարեր», թիվ 14, Կ.Պոլսի, 8 ապրիլի, 1911, էջ 328-331:

²⁴ Նույն տեղում:

²⁵ «Նոր կեանք», 1899, թիվ 18:

ԱՄՆ-ում լույս տեսնող «Կոչնակ» պարբերականն է²⁶ Ա. Փորթուգալայանին բնութագրում է որպես ազգային ու կրթական «գործերուն հնուտ», անաշառ ու անկաշառ, վեհանձն, անկեղծ և հայրենասեր, «կարող գրող մը, յաջող ուսուցիչ», «փոթորիկ հրաւիրող լեռ մը բլուրներուն մէջ» ով ջանահրության շնորհիվ միշտ մեծ արդյունք էր ապահովում²⁷: Ջայ իրականությունում, թերի Ռուսաս հոդվածագրի կարծիքով այդ շրջանում ոչ մեկն այնքան արագ չներշնչեց և «շարժման մէջ չդրաւ Ջայ ուսանողը ու այշափ կարծ ժամանակի մէջ այշափ մեծ արդիւնք չցուցուց»²⁸: Որակումներ, որոնք այնքան էլ հեռու չեն իրականությունից:

«Արմենիա»-ին ընդդիմախոս պարբերականների մեծ մասը կուսակցական պաշտոնաթերեր էին²⁹, մի մասն էլ՝ ոչ³⁰: Առավելապես արձագանքելով «Արմենիա»-ի հրապարակումներին՝ դրանք հրապարակում էին նյութեր, որոնց թերթը կամ չէր արձագանքում, կամ պատասխանում էր հավասարակշռված ու առանց մաղղի: Ավելի հաճախակի էին բանավեճերը «Դնչակ»-ի ու նրա արքանյակների («Մարտ», «Ապտակ» և այլն) հետ: Անմիջապես վճռական գործողությունների կողմնակից հնչակյանները «ժամկետանց», «պահպանողական» և ննանատիպ ոչ այնքան իրավացի որակումներով քննադատում էին աստիճանական վերափոխումների կողմնակից Ա. Փորթուգալայանին:

Փորթուգալայանին զայրացրել էր, որ «Ազատ թեմ»-ը սուստ գրպարտություններով հանդգնել էր սրբապղծել հայ ազատագրական պայքարի նահատակ Ա. Ավետիսյանի հիշատակը՝ մեղադրելով նրան Ամերիկայում հեղափոխության անունով գումարներ հավաքելու և Փորթուգալայանի հետ իրենց կարիքները հոգալու համար³¹: Նա պատասխանում էր, որ մեղադրելու համար մարդիկ պիտի պատմություն իմանան և հեղափոխության հերոսներին, որպեսզի անհիմն չպղծեն նրանց հիշատակը³²:

Փորթուգալայան-արմենականներ հարաբերությունները³³ քննարկելով Բոստոնի «Ազգ», Վառնայի «Իրաւունք» և այլ թերթեր հորդորում էին Ա. Փորթուգալայանին հրաժարվել արմենականների հանդեպ ժխտողական կեցվածքից: Երբ Վերջինս մերժեց, «Իրաւունք»-ը մեղադրեց Ա. Փորթուգալայանին «արմենիական» բառը սեփականաշնորհելու համար³⁴: 1890-ականների վերջերից «Արմենիա»-ն կրկնում էր իմբռ իրեն, որդեգրել էր զգուշակոր կեցվածք

²⁶ «Կոչնակ» պարբերականը լույս է տեսել 1900 թ.-ից: 1919 թ. դարձել է «Կոչնակ Դայաստանի», իսկ 1921-ից՝ «Դայաստանի կոչնակ» մինչև 1968 թ. սկզբում Բոստոնում, ապա՝ Նյու Յորքում, որպես շաբաթաթեր, այնուհետև դարձել է ամսագիր: Տարբեր տարիների պարբերականը խմբագրել են Վ. Քյուրքջյանը, Խ. Պենմեյանը, Դ. Խաղոյանը, Վահե Ջայը, Ա. Պետիկյանը և ուրիշներ:

²⁷ Նույն տեղում:

²⁸ «Կոչնակ», 8 ապրիլի, 1911, էջ 234-327:

²⁹ «Դնչակ», «Մարտ», «Դնչակյան կուսակցության պաշտոնաթերեր», լույս են տեսել Լոնդոնում, «Նոր կեանք», Վերակազմյալ Դնչակյան կուսակցության, Լոնդոն, «Դոչշակ», Թիֆլիս, 1911, պաշտոնաթերք, ռամկավարների «Ազգ», Բոստոնում, «Արեւ», Ալեքսանդրիայում և այլն:

³⁰ «Մշակ», Թիֆլիս, «Ազատ թեմ», Ալեքսանդրիա, «Արաքսը», Սամկու Պետերբուրգ, «Իրաւունք», Վառնա, «Դայաստան», Լոնդոն և այլն:

³¹ «Ազատ թեմ», 1906, ապրիլի 21:

³² Նույն տեղում:

³³ Այս խնդիրը ստորև մանրամասն քննարկվում է:

³⁴ «Իրաւունք», 1908, ապրիլի 9:

և դարձել Երկրորդական թերթ: Դրա համար էլ հաջորդ տարիներին մամուլուն եկան անդրադարձներ չկան:

Խորհրդային իշխանության առաջին տասնամյակներին գաղափարախոսական սահմանափակումների պատճառով Հայաստանում ազգային-ազատագրական պայքարի պատմությամբ զբաղվելը չէր խրախուսվում: Հատուկներությամբ գրվածքներում Ս. Փորբուգայանին ու «Արմենիա» թերթին ուղղակի անդրադարձներ գրեթե չկան, իսկ թեման լուսաբանվել է նախկին նուածողության և կոմունիստական թելադրանքի անհաջող «համաձայնեցումներով», լուսակցականության շեշտադրմամբ, դասակարգային մեկնակետով և վերապահումներով³⁵:

Հայ ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրությունը նոր մակարդակի բարձրացավ խորչչովյան ճնիալից հետո: Չթերագնահատելով մինչ այդ արվածը, նշենք, որ գրվեցին բարձր մակարդակի նոր ու հիմնարար պատմագիտական աշխատություններ³⁶: Խուսափելով «նացիոնալիստական» պիտակավորությոց, դրանք առերևույթ այնքան էլ անմիջականորեն ազգային-ազատագրական պայքարի խնդիրները չին լուսաբանում, սակայն լավագույնս ներկայացնում էին պայքարի վերելիքն նպաստող գործոնները, նշում, որ ազգային-ազատագրական պայքարն ուներ նաև սոցիալական բնույթ³⁷: Անշուշտ անժխտելի է նաև, որ խորհրդային պատմագիտությունը որոշ չափով հետազոտել է խնդրո առարկա թեմայի առանձին կողմերը, բայց տակավին ամբողջական աշխատություն չի ստեղծվել:

Անդրադառնալով «Արմենիա»-ին՝ Զ. Կիրակոսյանը շեշտել է, որ Ս. Փորբուգայանն իր պարերականով մեծապես նպաստել է հայոց վերազարթունիքի գործընթացին: Շրջանցելով կոմունիստական վարչակարգի սահմանափակումները՝ հեղինակը բարձր է գնահատել «բուրժուական «Արմենիան», իսկ խմբագրին համարել է հայ ժողովրդի «քաղաքական նուրացկանության» օգտակարությանը կասկածող, խարվելուց չհոգնելու սովորույթը մերժող ու նրանց մեջ ընթառություն ներարկող, գիտակցված և մանրակրկիտ նախապատրաստված հեղափոխության կոչող գործի³⁸: Հեղինակի կարծիքով Ս. Փորբուգայանն առաջիններից մեկը հասկացավ, որ թուրքի նպատակն է եղել «ջնջել հայկական ցեղը յուր հայրենիքի միջեն», և եթե հայ ժողովուրդը ժամանակին չսրափի ու չպայքարի, կվորցնի ամեն ինչ, ու ինքնը

³⁵ Լեօ, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. Ա, Փարիզ, 1934, նույն՝ Անցեալից, Թիֆլիս, 1925, Մյասնիկեան Ա., Ազգային հարցի առիթի, Մոսկվա, 1919 և այլն:

³⁶ Ներսիսյան Ս., Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնատիրությամ դեմ, Ե., 1955, Հովհաննիսիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 2-րդ, Ե., 1956, Համբարյան Ա., Ազրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914), Ե., 1965, Խուրշույշյան Լ., Սիյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964, Հովհաննիսիսյան Ռ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարիճի «Պաշտպան Հայրենաց» կազմակերպությունը, Ե., 1965, Բարսեղյան Խ., Սարսիկզին տարածում Հայաստանում (1880-ական թթ. - 1904), գիրք 1, Ե., 1967, Վարդանեան Յ., Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դ. Վերջին քառորդում, Ե., 1967, Ղազարյան Յ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Ե., 1967 և այլն:

³⁷ Քառությունյան Ը., Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում, Ե., 1967, էջ 315:

³⁸ Կիրակոսյան Զ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դարի 80-ական թթ., Ե., 1980, էջ 233:

Էլ կկորսվի: Ըստ հեղինակի՝ «Արմենիան» առաջին թերթն էր, որ ժողովրդի տառապանքների մասին խոսեց բարձրածայն, վառեց ազգասիրության ու հայրենասիրության կրակը: Մեծագույն նվաճում է համարում այն, որ թերթն ընթերցողներին փոխանցում էր սեփական ուժերին կորնելու, համերաշխ գործելու և փոխադարձ օգնության միջոցով բաղադալի ազատությանը հասնելու դրույթները:

Պատմաբան Ա. Համբարյանն էլ, քննարկելով «Արմենիա»-ի Փորբուգայան-արմենականներ առնչությունները՝ գործում է, որ իմանալով, թե իրեն ու իր թերթին են վերագրում Արմենական կուսակցության հիմնադրման պատիվը, Փորբուգայանը հայտարարել է, որ «Արմենիան» իր անունով երբեք կուսակցություն չի հիմնադրել: «Այնուամենայնիվ, արմենականները շարունակում էին «Արմենիա»-ն համարել իրենց գաղափարական օրգանը», - նշում է Համբարյանը և ավելացնում, որ արմենականները «Արմենիա»-ի հետ կապված էին միայն գաղափարապես»³⁹: Կիսում ենք հեղինակի տեսակետը, թերթը նորարար գաղափարների յուրահատուկ շտեմարան էր և նետ ներդրում ունի հայ քաղաքական մտքի մշակման գործում:

Պատմաբան Յ. Վարդանյանը, պարզաբանելով հայության ազատագրության հնարավոր ուղիմները, իրավացիրեն շեշտել է, որ հայրենասիրությամբ և արիության ոգով տողորված «Արմենիա»-ի «խնդիրն էր հայերի ծանր վիճակի մասին իրազեկել աշխարհի պրոգրեսիվ մարդկությանը, իրենց եղայրների ազատագրության շուրջ կենտրոնացնել պայքարի գաղափարախոսությունը»⁴⁰:

1950-ականների երկրորդ կեսերի վախսորած և գորշավոր աշխատություններին աստիճանաբար փոխարինելու եկան ավելի համարձակ ու նպատակալաւ երկեր, որոնցում ընդիհանուր, տեսական նախապայմանների քննարկումներից բացի տեղ էին գտնում արդեն նաև ազատագրական պայքարի շատ դրվագներ, կատարվում էին տեսական, գաղափարական եզրահանգումներ⁴¹:

Խորհրդային կայսրության վերջին տարիներից սկսած, առավել ևս՝ Հայաստանի անկախության հոչակումից հետո, հայ ազատագրական շարժման, մանուկի, ֆիդայական պայքարի, կուսակցությունների և մի շարք այլ հարցերի պատմությամբ ուսումնասիրողներն ավելի հաճախ սկսեցին զբաղվել⁴²:

³⁹ Համբարյան Ա., նշվ. աշխ., էջ 160: ժամանակաշրջանի շատ ու շատ կնճռուտ հարցեր ճիշտ ընկալելու խնդրում մեզ համար օգտակար են եղել նաև հեղինակի «Ազգարային հայրաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914)», Ե., 1965, «Երիտրությունի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908-1914)», Ե., 1979, աշխատությունները, թես անմիջականորեն նվիրված չեն «Արմենիա» թերթի պատմությանը:

⁴⁰ Վարդանյան Յ., Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դ. վերջին քառորդում, Ե., 1967, էջ 291:

⁴¹ Ա. Դովիաննիսյանը, Մ. Ներսիսյանը, Գ. Ղարիբջանյանը, Ս. Երեմյանը, Զ. Կիրակոսյանը և ուրիշներ, օգտագործելով հնարավոր բոլոր միջոցները, մուտք էին գործում տարբեր արխիվներ, որում թերում մինչ այդ արգելված վավերագրեր, հրատարակում և դարձնում դրանք հանրության սեփականությունը:

⁴² Գևորգյան Յ. Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էօք նրա հերոսապատճենից, Ե., 2012, նոյեմբեր՝ Հայոց ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., Ե., 2002, նոյեմբեր՝ Հայոց ազատագրատի զինան և ֆինանսավորման խնդիրը (1890-1908 թթ.), Ե., 2004, Խորհինյան Գ., Զ.Յ. դաշնակցության քննական պատմություն, ակունքներից 1895 թ. վերջը, Ե., 2006, Կոստանդնուպոլիս Ե., Ակնարկներ արևմտահայ

Արժուրելով Ս. Փորբուգայանի ազգանվեր գործունեությունը՝ ակադեմիկոս Գ. Գալոյանն իրավացիորեն նշում է, որ նա ժողովրդի ազատության համար ուժի ելած փաղանգի հավատավոր ներկայացուցիչն էր և իր «Արմենիայով հայոց մեջ զինված պայքարով ազատագրվելու գաղափարախոսության իհմնադիրներից մեկը եղավ»⁴³: Իսկ ազատագրական շարժման վերելքը, ըստ Ստ. Պողոսյանի, պայքանավորված էր տնտեսական, քաղաքական, մշակութային և մշշագգային ազդակներով, որոնք հայ մարդու մեջ փոփոխության պահանջ առաջացրին: Այդ լուսավոր գաղափարի առաջին սերմանողներից մեկը նա «Արմենիան» է համարում⁴⁴:

Նայ ազատագրական պայքարում «Արմենիա»-ի դերակատարությունը իրատեսորեն է գնահատել է. Կոստանդյանը: Ըստ նրա՝ Եվրոպայից դուրս մղվելուց հետո օսմանյան իշխանությունները կայսրության արևելյան շրջաններում վարեցին հայահալած քաղաքականություն, որի արդյունքում հայ և թուրք ժողովուրդների միջև եղած հակասությունը վերաճեց «ով-ումի» անգիտում պայքարի: Այդ գոյակրվի ակունքներում Կոստանդյանն առանձնահատուկ տեղ է հատկացնում «Վաճում հեղափոխական սերունդ ստեղծող»⁴⁵ Փորբուգայանին: Բարձր գնահատելով վերջինիս կրթալուսավորական ու կազմակերպչական գործունեությունը և չմերելով «ցուցանոլ արարքները»⁴⁶ պատմաբանը շեշտում է, որ Ս. Փորբուգայանի աշակերտներն ստեղծեցին հայ անդրանիկ Արմենական կուսակցությունը⁴⁷:

Նեգելյան սկզբունքով բանաձևելով ազգային կուսակցությունների եռամբանությունը՝ թեզ (արմենականություն), հակաթեզ (հնչակյաններ)⁴⁸ և սինթեզ (դաշնակցություն), Գ. Խուրինյանը նշում է, որ արմենականությունն առաջադրեց

մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005, Նայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ 1885-1914 թթ., Ե. Կոստանդյանը խմբագրությամբ, Ե., 2003, Նակրյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Ե., 1998, Ներսիսյան Ա., Դ.Յ. դաշնակցութեան պատմութիւն (1898-1908), հ. Բ և Գ, Պեյրուք, 2008, Պեյրուք, 2013, Շուշի՝ Ռուբեն, Ե., 2007, Շուշի՝ Ավետիք Սահակյան, Ե., 2006, Սարգսյան Ա., Նայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.), Ե., 2009, Շուշի՝ 1885-1908 թթ. հայ ժողովորի ազգային-ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ, Ե., 2010, Շովկաննիսյան Գ., Նաչակյան կուսակցության պատմություն (1887-1915 թթ.), Ե., 2012, Կարապետյան Ա., Արմենական կուսակցության կազմավորումը և գործունեությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Ե., 1995 և այլն:

⁴³ Գալոյան Գ., Աշվ. աշխ., էջ 404:

⁴⁴ Պողոսյան Ստ., Նայոց ենթապահության պատմություն, հ. 1-ին, Ե., 2008, էջ 382:

⁴⁵ Կոստանդյան Ե., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005, էջ 89:

⁴⁶ Շուշի տեղում, էջ 90-91:

⁴⁷ Կոստանդյան Ե., Սկրտիչ Խրիմյան (հասարակական-քաղաքական գործունեությունը), Ե., 2000, էջ 325:

⁴⁸ Ընդհանուր առմամբ, ընդունելով հանդերձ հեգելյան այս բանաձևումը, այնքան էլ համամիտ չենք հայ ազատագրական շարժման ակտուներում կանգնած կուսակցություններին ու նրանց առաջ քաշած տեսակետները դիտարկել որպես հակադիր բներմեր: Ի վերջո, նրանք այնքան էլ լավ չեն տիրապեսում տարերեն հզմ-երին և անում էին այն, ինչ կարողանում էին, անկախ նրանից, թե ինչ էին նշտածում կամ ինչի շուրջ էին բանավիճում ժմներում նստած տեսաբան-առաջնորդները:

«ազգային հեղափոխության» գաղափարը, որը պետք է հիմնվեր սեփական ուժերի և հնարավորությունների վրա: Այդ ուժերի ցրված լինելու ու տկարությունը հանգեցրին Փորբուգայանի կողմից «Ներքին ուժի» ձևավորման ռազմավարական խնդրի առաջադրմանը որպես արտաքին հանգամանքների բարենպաստ դասավորությունից օգտվելու վճռորոշ պայման»⁴⁹: Պատմաբանի բնորոշմանը Մ. Փորբուգայանը հստակ գիտակցում էր, որ հայ ժողովուրդը դեռևս պատրաստ չէ սկսվող ազատագրական մարատումներին, ինչն էլ հանգեցնում էր նախ՝ կրթվելու, կազմակերպվելու, ապա՝ նաև սեփական ուժ կազմավորելու գաղափարին: Սակայն հայ երիտասարդության արմատական թվար դժգոհ մնաց «Արմենիա»-ի չափավոր ուղեգծից և որդեգրելով անմիջապես գործելու ու առանց հապաղելու արդյունքներ տեսնելու մարտավարություն «հակառեց միմյանց ազգային դատը ու համամարդկային ազատագրության իդեալը»⁵⁰: «Արմենիա», փորձելով կողմնորոշվել իր դավանած սկզբունքների և «Յնչակ»-ի առաջ քաշած թեզերի միջև, նկատում էր, որ «առաջինը ամեն հայու ափին մէջ մէկ մարդինի հրացան կորդէ տեսնել, երկրորդը ամեն Հայու գանկին մէջ «Կարլ Սարգս»ի միգամած վարդապետութիւնները կորդէ գետեղել»⁵¹: Ուստի, երբ «Արմենիա»-ն «Յնչակ»-ի կտրուկ հարցադրումներին պատասխանում էր «Երազով օր կանցունենք»⁵² և «Միութիւնը օրորութիւն է»⁵³ ձևակերպումներով, ապա ակնհայտ է դառնում, եղրակացնում է Գ. Խուդինյանը, որ «նման բանաձևումների տեսական-գաղափարախոսական «պարզունակությունը գործնական գետնի վրա ավելի իրատեսական է, քան հնչակյանների տեսական մտքի՝ արևմտահայ իրականությանը չհամապատասխանող «խորությունը»»⁵⁴:

Թերթի հիմնադրման պատմությանը հետաքրքիր, սակայն մեզ համար անընդունելի տեսակետ է հայտնել Լ. Ալյոանը: Նրա կարծիքով, քանի որ օսմանյան իշխանությունները խիստ հսկողություն էին սահմանել ընդդիմադիրների նկատմամբ. «Վերջիններս ստիպված եղան Ս. Փորբուգայանին գործութել Ուստի...»:

Յայ ազգային-ազատագրական պայքարի, կուսակցությունների ու անհատ գործիչների պատմությունը շարադրելու գործում հուշագրությունները խիստ կարևոր են, իսկ «Արմենիա» թերթի դեպքում, երբ արիստվային վավերագրերը սակավ են, դրանք ավելի կարևորվում:

Արմենական-ռամկավար հուշագիրները հիմնականում դրական են գնահատում Փորբուգայանի գործունեությունն ու «Արմենիա»-ն⁵⁵: Յնչակյան հուշագիրների⁵⁶ մոտ նկատելի է երկու մոտեցում. 1890-ական թթ. գրված

⁴⁹ Խուդինյան Գ., նշվ. աշխ., էջ 118:

⁵⁰ Նույն տեղում, էջ 121:

⁵¹ Խուդինյան Գ., նշվ. աշխ., էջ 118:

⁵² Մեր ընկերը-մեր ոյժը, «Յնչակ», 1891, թիվ 3, մարտ, էջ 2:

⁵³ «Արմենիա», 1891, 15 յուլիս, թիվ 90:

⁵⁴ Խուդինյան Գ., նշվ. աշխ., էջ 124:

⁵⁵ Յուշեն Արմենակ Եկարենակի, Պեյրութ, 1985, Տամատեան Մ., Իմ յուշերս, խմբագրեց Եւ ծանօթագրեց Վաչէ Ղազարեան, Պեյրութ, 1985, Թերթեմեյան Փ., Կյանքիս հուշերը (մերենագիր), տես Յայաստանի ազգային պատկերասրահ, հուշաձեռագրային բաժին, Փ. 60, ու. 11, թր. 27, 28, Պոլոսեան Յ., Մեր ուղարք, ի՞նչ ենաւ եւ ինչպիսի ըլլայ, Պուստն, 1935, նոյսի՞ Կուսակցական կեանքի յուշերս, Պեյրութ, 1987:

⁵⁶ ճամկուեան Յ., Յիշատակներ հայկական ճգնաժամեն, Կ.Պոլիս, 1913, Խան-Ազատ Ո. Յայ յեղափոխականի յուշերից, «Յայրենիթ» ամսագիր, Բոստոն, 1927, թիվ 11, սեպտեմբեր, էջ 124-138, 1927, թիվ 1, նոյեմբեր, էջ 122-135, 1927, թիվ 2, դեկտեմբեր, էջ

հուշերում բոլորն անխստիր քննադատում են Ս. Փորթուգայանին, պահպանողական անվանում: Հետագայում, նեղվելով ՀՅԴ-ի տիրապետող դիրքերից, սկսում են դրական վերաբերվել հավանական դաշնակից դարձած արմենականներին, նրանց հոգևոր հայր Ս. Փորթուգայանին ու նրա թերթին: ՀՅԴ հուշագիրները⁵⁷ զնահատում և ներողամիտ վերաբերնունք են դրսկորում Ս. Փորթուգայանի ու «Արմենիա»-ի առաջին տարիների գործունեության նկատմամբ, իսկ հետագայում՝ հաւկապես գաղափարական հարցերում, քննադատում են: Ավելի ուշ, զնահատելով Ս. Փորթուգայանի դաշնակցամետ պահվածը և «Արմենիա»-ն համարելով «անվտանգ», առիթը ներկայանալու դեպքում օգտագործում են թերթի ամքինը:

Թեև զերծ չեն կուսակցականությունից, սակայն փաստառատ են և սկզբնաղբյուրի արժեք ունեն Ա. Եկարյանի հուշերը: Դրանցում ներկայացնելով հեղափոխության արշալուսը՝ նա նշում է, որ «Արմենիան ամէն կողմ տարածուած էր եւ՝ «Մշակի հետ՝ երիտասարդութեան մտքին հայրենասիրական թռիչք նը կուտար» և «զարկ նը տրվեց երկրի շարժումին»⁵⁸:

1880-ական թթ. մինչև 1896 թ. ներառող Ս. Տամատյանի հուշերի առաջին մասում⁵⁹ Փորթուգայանին հեղինակն իրավացիորեն մեղադրում է այն բանում, որ «իր յեղափոխական գինիին մէջ շատ ջուր խառնած էր, այնպէս որ իր հիմնած «Արմենիա» թերթին ի սկզբան տւաւ չափաւորական ուղղութիւն մը» և որ ինքը «խաղաղ առաջադիմական» էր ու «երկու գաղափարներու միջեւ կտարութերէր, կեսյեղափոխական ուղղութիւն մը ունէր»⁶⁰:

Անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի վարչակարգ է գոյություն ունեցել հայրենիքում, Սկիյուռքում գրվել են պատմագիտական ուսումնասիրություններ, որոնք, անկախ լույսընծայման թվից, մեկտեղել ենք և միասնաբար քննարկել: Դրանք փաստառատ են, պարունակում են սրափ վերլուծություններ և եզրահանգումներ:

Սկիյուռքում լույս տեսած աշխատություններից առանձնանում է ռամկավար Ա. Դարբինյանի պատմագիտական ուսումնասիրության ու հուշագրության

112-130, 1928, թիվ 3, հունվար, էջ 114-128, 1928, թիվ 4, փետրվար, էջ 123-135, 1928, թիվ 5, մարտ, էջ 102-114, Աղամիրեան Խ., Հայ սոցիալ-դեմոկրատական «Հնչակ» կուսակցության և նրա գործունեության մասին, Բարու, 1925, ՅԱԱ, ֆ. 1456, ց. 2, գ. 24, Սասպի-Գիլեան Ստ., Փոքր Հայքի յիշատակներ, Զիկագոր, 1917, Բերբերեան Ռ., Պատրանքների շրջանից և այլն:

⁵⁷ Ուլթն, Հայ յեղափոխականի մը յիշատակները Ե., 1990, Փակագեան Վ., Իմ յուշերը, հ. առաջին, Պոսթըն, «Հայրենիքի» տպարան, 1950: Կրամայիս Ազգաւորեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, մաս 4-րդ, 1937, թիվ 4, էջ 144-149, մաս 5-րդ, 1937, թիվ 5, էջ 135-141, մաս 6-րդ, 1937, թիվ 6, էջ 150-153, Լեվոն Թադէստեանի յուշերը, գրի առա Ն. Հանգոյց, «Հայրենիք» ամսագիր, 1923, թիվ 7, էջ 176-187, Կարոնյ առաջին դեպքը, «Ծերամ Ղազարեանի յուշերը», «Ղիվան ՀՅ Դաշնակցության», հաս. առաջին, Պոսթըն, 1934, էջ 3-10, Ղետնդ Կանտոյեանի յուշերէն ամփոփեց Արտեն Թելլեմեղեան, «Հայրենիք» ամսագիր, 1956, թիվ 4, էջ 87-97, Մողեան Վ., Կարդենեսից Սարգար Վարժապետը և Աւուտի դէպքը, «Տարոնի արծիւ», օրգան տարոնական ոգու, 1941, թիվ 17, էջ 8-14, Ֆերահեան Ս., էջ նը անցեալն «Հայրենիք», 1925, թիվ 1, էջ 130-132, տես' նաև Յեղափոխական խմորումներ (1890-1896), «Հայրենիք» ամսագիր, 1953, թիվ 1, էջ 1-14 և այլն:

⁵⁸ Յուշեր Կրմենակ Եկարեանի, Պեյոութ, 1985, էջ 23:

⁵⁹ Տաճատեան Ս., Իմ յուշերս, խմբագրեց եւ ծանօթագրեց Վաչէ Ղազարեան, Պեյոութ, 1985:

⁶⁰ Նույն տեղում, էջ 25-29:

շաղախ աշխատությունը⁶¹, որում հեղինակը բարձր է գնահատում «թուրք բռնապետութեան դէմ ըմբռստացող դասակարգի բռողքի ձայն «Արմենիան»⁶²: Նա շեշտում է, որ «Արմենիա»-ի հրատարակությունը և «անոր միջոցավ արտայայ-տուած առողջ գաղափարներն են, որ ներշնչեցին փորբուգալեաններուն որոշ ուղղութիւն եւ մարմին մը տալով իրենց գաղափարական միութեան, սկիզբը դարձնել զայն նաեւ հայ անդրամիկ յեղափոխական կուսակցութեան»⁶³: Խոսելով ազատագրական շարժման նախակարապետներ Մ. Խորիմյանի և Ս. Փորբուգալ-յանի համագործակցության մասին՝ Ա. Դարբինյանն իրավացիորեն եզրակացնում է, որ «Անոնք 40-50 տարի առաջ խորապես այն համոզնան եկած էին, թե հայերը Թուրքիոն մէջ ինքնապաշտպանութեան պէտք է դիմէն ամեն բանէ առաջ, ուզեցին արբոցնել հայ ժողովրդի հնքնագիտակցութիւնը, բայց բնաւ չըսին, թե փութկոսութեամբ և տղայական ցոյցերով կարելի պիտի ըլլա ժողովուրդն ապստամբութեան մղել»⁶⁴: Սիամանանակ հեղինակը խոսում է Ս. Փորբուգալյանի երթեմն դրսարպան ցուցանոլ և անտեղի արարքների մասին:

«Արմենիա»-Արմենական կուսակցություն առնչությունները քննարկող Վ. Ղազարյանը կուսակցության գաղափարական հոգևոր հայր է համարում Ս. Փորբուգայանին, իսկ ծնից «Արմենիա»-ն. «Ճայութիւնը, հաւանաբար նկատի ունենալով, որ կազմակերպութեան յարած անդամները ստանձնած էին Փորբուգալեանի «Արմենիա» թերթին ցրումը եւ դարձած անոր միտքերուն տարածիչը, կուսակցութեան անդամները ճանչցաւ իրեւ արմենիականներ, եւ այդպիսով է որ շարժումն ինքինք անուանեց Արմենական կազմակերպութիւն»⁶⁵: Իսկ հետագյում, երբ կուսակցությունն «արդեն գործնական աշխատանքներու շրջանին մէջ էր», հնարավոր էր համարվում «օգտուիլ այդ թերթին մէջ երեւցած թելադրութիւններէն»⁶⁶ և նյութապես օգնել: Իսկ հետո դարձնել իրենց օրգանը:

«Արմենիա»-ն իրատեսական խմբագրականներով «լաւագոյն առաջնորդը կը հանդիսանար»⁶⁷ մեր ազատագրական պայքարում իր հուշագրություն-ուսումնասիրության մէջ արժանորում է Ս. Նաթանյանը: Յեղինակը, շարժման «անախշնթաց ձախողանքը» տեսնելով, հրամայական անհրաժեշտություն էր

⁶¹ Սովորաբար հուշագրությունները պատմագիտության մէջ համարվում են սկզբնադրյուններ, սակայն երեմն (օրինակ՝ Ա. Դարբինյանի, Ռուբենի, որոշ չափով նաև Մ. Նարանյանի և այլոց երկերի դեպքում) դրանք հուշագրության և ուսումնասիրության համադրություն են և սկզբնադրյունը իմենով հանդերձ նաև ուսումնասիրություններ են: Թե որն է դրանցում գերակշռող, միանշանակ դժվար է ասել: Կարծում ենք, որ աղբյուրագիտական հենքով, բարձրացրած հարցերով, առաջ քաշած տեսակետներով և հեղինակների սուրյեկտիվ մոտեցումներով դրանք ավելի շուտ պատմագիտական աշխատություններ են իշխեցնում: Մեզ համար կարևոր դրանց պատմագիտական մտքի գնահատումն է:

⁶² Դարբինյան Ա., Յայ ազատագրական շարժման օրերէն, յուշեր 1890-էն 1940, Ե., 2003, էջ 81:

⁶³ Նոյն տեղում:

⁶⁴ Նոյն տեղում, էջ 106:

⁶⁵ Ղազարեան Վ., Արմենական կուսակցութիւնը (ակնարկներ), Պեյրութ, 1985, էջ 12:

⁶⁶ Դարբինյան Ա., Եշվ. աշխ., էջ 40:

⁶⁷ Նարանյան Ս., Արմենական կուսակցութիւնը ծագումն սկսեալ մինչեւ Սահմանադրական Ռամկավար կուսակցութեան կազմութիւնը, Գահիրէ, 1990, էջ 14:

համարում «Արմենիա»-ի օրինակով «ընդունիլ եւ իրապարակ հանել պխալները, զգուշացնելու համար նոր և գալիք սերունդները մեր սայթաքումներէն»⁶⁸:

XIX դարի 2-րդ կեսի արևատահայերի ազատագրական պայքարի պատճառներին, հայկական կուսակցությունների գործունեությանը, Հայկական հարցին և հայ հեղափոխական շարժմանը Եվրոպական երկրների վերաբերմունքին ու դրան հաջորդող հայկական կուսակցությունների ծագման խնդիրներին նվիրված սփյուռքահայ հետազոտող Լ. Նալբանդյանի աշխատության մեջ անդրադարձներ կան նաև Ս. Փորբուգայյանի գործունեությանը և «Արմենիա» թերթի պատճությանը: Ներկայացնելով այդ պայքարի զարգացման ընթացքը՝ Լ. Նալբանդյանն իրավացիորեն նշում է, որ «Ազգը բարդությավորվածից վերածվեց արթնացած հասարակությանը», և դրանում «մանուլը կարևոր կրթական դեր խաղաց ու մատնանշեց դեպի ապստամբություն տանող ճանապարհը»⁷⁰: Նայ ժողովուրդը դարերի ընթացքում փայփայում էր օտարի տիրապետությունից ազատվելու գաղափարը, իսկ աշխարհում տեղի ունեցած որպակական փոփոխությունները, Օսմանյան կայսրության փլուզման եզրին լինելու հանգամանքը հետեւոլինյան շրջանում արդեն հույս էին ներշնչում, որ կարող են արդյունավետորեն շարժվել դեպի ազատությունը: Կիսում ենք հեղինակի տեսակետը, որ ժողովորդին դեպի այդ ուղին առաջնորդողներից էր Ս. Փորբուգայյանը, ում «հայացքներն արագորեն շրջվեցին դեպի հեղափոխության ուղին, ով եկավ այն հավատի, որ ազատությունը չի կարող նվաճվել առանց երկար նախապատրաստության»⁷¹: Իրատեսորեն գնահատելով թուրքական կառավարության դեմ հայության պայքարը՝ հեղինակն իրավացիորեն եզրակացնում է, որ այն «համարի ներտում վերածվեց դասակարգայինի»⁷²:

Նայոց պատգամը «Մեծ երազ» անվանած Գ. Անարոնյանը կարևորում է «Արմենիա»-ի հանդարտարարությունը՝ ընթացքը և թերած մեծ նպաստը «կարելին արուեստ քաղաքականութիւնը» քարոզելու, ժողովորդի գիտակցությանը հասցնելու ու սուրբ հանելու գործում: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ «Արմենիա» թերթը պոռոս քարոզչութենէ և արկածախմրդական վտանգաւոր գործունեութենէ հեռու մնաց միշտ, անկիա որդեգործ իրատես վարքագիծ մը, եւ խուսափեցաւ ծատագովելէ ծրագիրներ, որոնք կրնային անհարկի կերպով վտանգել մեր անպաշտապան զանգուածը»⁷³:

Պ. Տեփոյանը «Ուխտուածներ» շարում⁷⁴ թեև «Արմենիա» թերթին շատ տեղ չի հատկացրել, սակայն իրական գույներով է ներկայացրել երկում տիրող ծանր կացությունը և ժողովորդի պայքարելու պատրաստակամությունը: «Պերլինի դաշնագործեան հետեւող հայկական նոտաշուարումի շրջանը, երկար չտեսեց»,՝ արձանագրում է հեղինակը, ապա շեշտում, որ ժողովորդին «կառաջնորդէին

⁶⁸ Նույն տեղում:

⁶⁹ Նալբանդյան Լ., Նայ հեղափոխական շարժում: Նայ քաղաքական կուսակցությունների զարգացմանը 19-րդ դարի ընթացքում, Ե., 2012, էջ 55:

⁷⁰ Նույն տեղում, էջ 58:

⁷¹ Նույն տեղում, էջ 101:

⁷² Նույն տեղում, էջ 50:

⁷³ Անարոնյան Գ., Մեծ երազին ճամբուն վրա (ակնարկ Հայկական հարցի պատմութեան վրա), Գ հրատարակութիւն, Լու-Անձելու, 1968, էջ 38:

⁷⁴ Տեփոյան Պ., Միհրան Տամատեան (1863-1945), Պեյրութ, 1964, նույնի Ասոռ Ալանեան, Պեյրութ, 1988, Նիւթեր պատճութեան համար, մեր առաքելութեան ճամբով, Պեյրութ, 1988:

շարժումներն ու ինքնանուղ շարժողները»⁷⁵: Դա «սրբազան հրայրք մը բռնուած» ցեղի ուժի արտահայտիչ երիտասարդությունն էր, որը նետվեց՝ ոտքի հանելու ժողովրդին և իրագործելու ազատության անկարելի հրաշքը: Առաջինը եղավ մեր մտավոր զարթոնքը՝ «ութանական թուականներու վերջերուն մեր քաղաքական ազատութեան առաջապահները հրապարակ կու գային, գերագոյն վճռականութեամբ մահը իսկ արհամարհելով նետուեցան պայքարներու մէջ»⁷⁶, գրում է Պ. Տեփոյանը և ընդգծում, որ դրանց առաջին շարքերուն էր Մ. Փորբուգայանն իր «Արմենիա»-ով:

Ներկայացնելով ազատագրական գոյամարտում թերթի ներդրումը՝ Յ. Ուզունյանը գրում է. «Արմենիա»ն հանդիսացաւ Թուրքիոյ բռնադիրական, վայրագ արարքները քողագերծող, հայ ժողովրդին բողոքը բանաձեւող եւ անոր իրաւունքները պահանջող հայ հայրենասէրին ճայնը»⁷⁷: Ըստ Ուզունյանի «Արմենիա»-ն «կերեադրէ դիմել բոլոր յարնար միջոցներուն հայ ժողովրդին ազատորեն ինքինը կառավարելու հրաւունքը» Նվաճելու համար, «կիրատարակէր ողբալի վիճակը գաւառներու հայութեան և կարծարծէր հայրենասիրական բուռն զացումները ժողովրդին մէջ»⁷⁸:

Յ. Վարդիվառյանն⁷⁹ էլ նշում է, որ հայ ժողովրդին ոտքի հանելու համար ամիրաթշշու էր նախ հեղափոխել նրան գաղափարապես, ինչն էլ նախաձեռնեց «Արմենիան»: Յեղինակն ընդգծում է, որ Ս. Խրիմյանի հայրենասիրությունը, Մ. Փորբուգայանի լուսավորությունը և Ս. Ավետիսյանի ազատասիրությունը հեղաբեկում առաջացրին հայության մէջ և ծնունդ տվեցին հեղափոխական գաղափարախոսությանը, գենքի դիմելու ու ինքնապաշտպանվելու մոլունքներին: «Արմենիա» թերթի գաղափարներից ծնվեց և հասակ առավ ազատագրական պայքարի գիտակցությամբ ու վճռական պայքարի լծված մի սերունդ, որը հայոց փրկությունը տեսնում էր մարտական ուժի մէջ: Յեղինակն առանձնացնում է արմենականների հայութային պայքարին սատարող ծախս-արմատական և չափավոր թևերը և իրավացիորեն ընդգծում, որ կուսակցության օրգանի դերը որոշ ժամանակ կատարել է «Արմենիա»-ն:

Ա. Ահարոնյանը⁸⁰ «Արմենիա»-ն համարում է «ազատալեզու քարոզիչ», որը «չըլլալով հանդերձ բռնի ուժի ջատագով, յեղափոխական ոգի կը մերշնչէր Վասպուրականի երիտասարդ սերունդին և զայն կը մղէր ընդդէմ թուրքին»⁸¹:

Պարբերականի քարոզչակազմակերպչական գործունեությունը բարձր են գնահատել նաև սփյուռքահայ նշանավոր մտավորականներ Մ. Շիզմեճյանը, Կ. Սարաֆյանը, Ս. Իզմիրյանը, Ն. Ակիշյանը և ուրիշներ⁸²:

⁷⁵ Տեփոյեան Պ., Նիւթեր պատմութեան համար, մեր առաքելութեան ճամբով, Պէյրութ, 1988, էջ 17:

⁷⁶ Նույն տեղում, էջ 25:

⁷⁷ Ուզունեան Յ., Արևատահայ ազատագրական պայքարին ծագումը Արմենական կուսակցութեան մէջ և Ռամկավար Ազատական կուսակցությունը իր 60-ամեակին, Լուս-Անձելըս, 1986, էջ 22:

⁷⁸ Նույն տեղում, էջ 23:

⁷⁹ Վարդիվառյան Յ., Մեծ Երազի ճամբուն ուղեւորները եւ համապարփակ պատմութիւն Ռամկավար ազատական կուսակցութեան, հ. Ա, Արմենական կազմակերպութիւն բաժին, Նիւթերի 2015:

⁸⁰ Ահարոնեան Ա., Յերասուական դէմքեր Ռ.Ա.Կ.ի, Լուս-Անձելըս, 2001:

⁸¹ Ահարոնեան Ա., Երախտավորներու ուղին, հ. Ա, Լուս-Անձելըս, 2006, էջ 14-15:

⁸² Շիզմեճյան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925, Ֆրեզնո, 1930, Սարաֆեան Կ., Ակնարկ մը Արմենական կուսակցութեան պատմութեան

Դայ ազատագրական գաղափարաբանությանը նվիրված ծանրակշիռ ներդրում կարելի է համարել Գ. Գյողայանի ուսումնասիրությունները⁸³: Դայաստանի հայությանը պարտադրված խորհրդային ամբողջասիրության սկզբնական շրջանում, երբ հայ քաղաքական մտքի ու ազգային արժեքների դեմ բոլշևիկյան գաղափարախոսության դիտանկյունից ծավալվեց պատմության նենգափիշումների ալիքը, Գ. Գյողայանը մերկացրեց խեղաքյուրելու այդ փորձերը և ընդգծեց այն համազգային արժեքները, որոնք կարևոր էին ժողովրդի հիշողության պահպաննան և Վերաթարմացնան գործում: Բանաձևելով, որ 1880-ական թթ. «Քուրքը Երկրի իրավական տերն էր, քուրք՝ իրավական տերը, հայը՝ հայունիք ունեցողը եւ իրավագործը»⁸⁴, Գյողայանը պարզաբանում էր, որ ստեղծված իրավիճակում քուրդն ու թուրքը միացել էին հայերի դեմ, և հենց դրա արդյունքում ծագեց Դայկական հարցը: Իսկ հայության մեջ սկսվեցին մտավոր վերածնության ու հոգևոր վերափոխման շարժումները, որոնց ակունքներուն հեղինակն ընդգծում է Ս. Փորբուգայանի ու նրա «Արմենիա»-ի էական դերակատարությունը:

Թուրք պատմաբանները⁸⁵, որոնց ձայնակցում են աղբեջանցի կեղծարարները⁸⁶, ևս անդրադարձել են քննարկվող ժամանակաշրջանին: Նենգափիշելով պատմությունը՝ նրանք հայ ազատագրական պայքարը համարել են արիեստածին, իսկ հայությանը՝ «անհավատարիմ ազգ», իբր որի համար էլ պատժվել են:

Աշխատությունը շարադրելիս «Արմենիա» թերթի քաղաքական բնույթի հրապարակումները համեմատել ենք ժամանակի մանուլում («Մշակ», «Հնչակ», «Դրոշակ», «Սարտ», «Նոր Լեռնք» և այլն) տեղ գտած տեսակետների հետ և բոլոր դեպքերում մշտապես ելակետ ենք ունեցել ու այդ գնահատականի հիմքում դրել համազգային շահը:

Ավելացնենք, որ չենք կիսում այն հետազոտողների տեսակետները⁸⁷, որոնք, խորամուշ չինելով պարբերականի պատմության մանրամասներում, փորձել են

Վրայ, Պէյրութ, 1960, Խօմիրեան Ս., Դատումներ մեր հարիւրամեայ յեղափոխութեան մասին անձնական յուշերուս ընդմէջն, Պէյրութ, 1962, Ակիշեան Ն., Մեծերեն տասը, Լու Անճելըս, 1990:

⁸³ Գիլգալեան Գ.՝ Պատմական խնդիրներ, Պէյրութ, 1937, նոյնի՝ Դայ քաղաքական մտքի զարգացումը եւ Յ. Յ. Դաշնակցութիւնը, Մատենաշար «Դրոշակ», թիւ 66, Փարիզ, 1927, նոյնի՝ Խրիմեան Դայիկ, Գաղափարների աշխարհը, Պէյրութ, 1954:

⁸⁴ Գիլգալեան Գ.՝ Խրիմեան Դայիկ, Գաղափարների աշխարհը, Պէյրութ, 1954, էջ 6:

⁸⁵ Taner Akçam, Türk-Ulusal Kimliği ve Ermeni Sorunu. İstanbul, 1995, Documents Diplomatiques Ottomans: Affaires Arméniennes (ed. by Bilâl Şimşir), vol. 1 (1886-1893). Salahi R. S., The Ottoman Armenians, London, 1987, Ankara, 1985, Halaçoğlu Yusuf, Ermenitehciri (4 baski). İstanbul, 2004, Esat Uras, The Armenians in History and the Armenian Question. İstanbul, 1988, Mehmed Hocaoglu, Arşivvesi kalariyla Tarihte Ermeni Mezâlimive Ermeniler, Ankara, İstanbul, 1976, E. Z. Karal, Armenian Question (1878 – 1923), Ankara, 1975 և այլն:

⁸⁶ Гасымлы Муса, Анатолия и Южный Кавказ в 1724-1920-е гг., В поисках исторической истины, М., 2014, Вердиева Х., Гусейн-заде Р., Родословная армян и их миграция на Кавказ с Балкан, Баку, 2003., Юсиф кзы Жердиева, Первая Мировая война и Кавказские мусульмане-беженцы, «Истина», Астрахань, 2013, № 2, стр. 34-35. Наджафов Б., Лицо врага, История армянского национализма в закавказье в конце XIX- начале XX веков, Баку, 1993, Файғ Ә., Правда о терроре, армянский терроризм-истоки и причини, Баку, 2000:

⁸⁷ Ավետիսյան Վ., Դայ հասարակական մտքի զարգացման Մարքս-Էնիմյան փուլի սկզբնավորումը, Ե., 1976, Լեօ, Անցեալից, Թիֆլիս, 1925, նոյնի՝ Թուրքահայ յեղափոխեան գաղափարաբանութիւնը, հ. Ա. Փարիզ, 1934, Դամբարյան Ա., Դայ

ստվերել «Արմենիա»-ի կարևոր տեղը հայ քաղաքական մտքի ու մանուկի պատմության մեջ: Համամիտ ենք վաստակաշատ Զ. Կիրակոսյանի այն կարծիքին, որ. «չի կարելի համաձայնել այն ընկերների հետ, ովքեր փորձել են նսենացնել «Արմենիա» թերթի տեղը հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ, նրա խաղացած ակտիվ դերը արևատահայության ազատագրության գաղափարախոսության զարգացման, գործնական քայլերի մշակման ասպարեզում»⁸⁸: Սերժում ենք մեզանում տեղ գտած այն բյուր եզրահանգումը, թե իրը «Արմենիայի» նապատակն է եղել հայոց ազատագրությանը հասնել բացառապես եվրոպական դիվանագիտության օգնությամբ: Թերթի հրապարակումների մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գերիշխող է եղել նախ և առաջ սեփական ուժերին ապավինելու դիրքորոշումը: Ավելին, Մ. Փորթուգալյանի կարծիքով ազատագրական շարժման ղեկավարները ժողովորդի մեջ ու նրա հետ պետք է լինեն, այնինչ երբեմն նրանց մեջ մասը նույնիսկ Հայաստանում չէին եղել: Իհարկե, Մ. Փորթուգալյանը դեմ չիր Եվրոպայի օգնության ու դիվանագիտական աջակցությանը, սակայն կոչ էր անում նախ և առաջ հույսը դնել սեփական ուժերի վրա: Այնպես որ «Արմենիա»-ն հայ քաղաքական մտքի վրա խոր ու անջնջելի դրոշն է բռնել և պարունակում է շատ ուսանելի դրույթներ, որոնք այսօր էլ արդիական են ու կիրառելի: Խակ անջտությունները հետևանք են այն բանի, որ երբեւ «Արմենիայի» պատմությունը խորությամբ չի հետազոտվել:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսությունը բարկացած է ներածությունից, բովանդակությունից, հինգ գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ընթանուր ծավալը կազմում է 410 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՎԸ մեջ ներկայացված է թեմայի արդիականությունը, ցույց են տրված ատենախոսության գիտական նորույթը ու կիրառական նշանակությունը, նշված են հետազոտության նպատակները և խնդիրները, ժամանակագրական շրջանակները, տրված է իմանահարցի ուսումնասիրվածության աստիճանը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՍԸ ԱՐԵՎԱՏԱՐԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԳԱՂՎԱՓԱՐԱԽՈՍՈՒ

Առաջին ենթագլուխ – Մ. Փորթուգալյանի կյանքը և հասարակական-քաղաքական գործունեությունը:

Բնոլինի վեհաժողովից հետո մեծ տերություններից հուսախար արևատահայությունն սկսեց նոր ուղիներ քննութել՝ օսմանյան բռնատիրությունից ազատագրվելու համար և հանգեց «Երկար շերեփի», այն է՝ սեփական ուժին կրթներու գաղափարին: Արևատահայության ազատության խնդրով մտահոգ մտավորականության համար հստակ էր, որ կազմակերպվելու և ժողովրդին պայքարի դուրս երելու համար նախ հարկավոր էր վերափոխել նրան հոգեբանորեն՝ սերնանել դարավոր լուծը թոթափելու և ազատ ապրելու ձգտում: Այդ զարթոնքը լիակատար դարձնելու համար անհրաժեշտ էր կրթել,

հասարակական-քաղաքական միտքը արևատահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990, Վարդանյան Յ., Արևատահայելի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դ. Վերջին քառորդում, Ե., 1967, Պարսամյան Վ., Պատմագիտական աշխատություններ, Ե., 1985, Ղազարյան Յ., Արևատահայությունը ցեղասպանության նախօրյակին, Ե., 2001 և այլն:

⁸⁸ Կիրակոսյան Զ., նշվ. աշխ., էջ 248:

ազատասիրական ոգով դաստիարակել և նախապատրաստել հեղափոխական սերունդ: Այդ հայրենանվեր առաքելության ակունքներում էր կանգնած Մ. Փորբուգայանը: Մարդ, ով ամբողջ կյանքը նվիրաբերեց հայության ազատագրության գործին, սակայն չի արժանացել ուսումնասիրողների անհրաժեշտ ուշադրության ու գնահատանքին⁸⁹ չհաշված հպանցիկ անդրադարձները⁹⁰:

Ժամանակի ազդեցիկ լրագրերին ակտիվ թրակցելու, «Վարագդատեան», «Արարատեան» և այլ ընկերություններ հիմնադրելու, «Ասիա» թերթը խմբագրելու, կրթակազմակերպչական և հրապարակախոսական գործունեության արդյունքում Փորբուգայանը շուտով դարձավ Մ. Խրիմյանի, Գ. Սրվանձտյանի, Գ. Օտյանի, Ն. Վարժապետյանի համախոհն ու գործընկերը՝ իր ամենակտիվ մասնակցությունը բերելով հայոց ազգային-քաղաքական զարդումի գործընթացին:

Գ. Վրձունու և Րաֆֆու խնդրանքով մի քանի տարի Մ. Փորբուգայանը գործունեություն է ծավալում Կանում և ակտիվ մասնակցում սկսված հայ ազգային-ազատագրական պայքարի առաջին շրջափուլին, որի ընթացքում վաճական տերորիկյան կրթական համակարգն աստիճանաբար տեղի էր տալիս աշխարհիկ կրթածերին: Այստեղ նա հիմնում է մի քանի կրթօջախներ, որոնց զարդապատճենը Կենտրոնական վարժարանն էր: Փորբուգայանի գլխավորությամբ այս կրթարանից դուրս եկավ հեղափոխականների մի կոհորտա, որը ոչ միայն պարզեց ազատության դրոշը և հիմնադրեց Արմենական կուսակցությունը, այլև հերոսացավ 1896 և 1915 թթ. գոյամարտերի ժամանակ՝ ոչնչացումից փրկելով Վասպուրականի հայությանը:

Երկրորդ ենթագույն – Մ. Փորբուգայանի դերը արևանտահայության ազատագրական պայքարի գաղափարականության մշակման գործում:

Մ. Փորբուգայանի ազատասիրական մղումներն ու գործունեությունը աննկատ չմնացին իշխանությունների աչքից: Սկսվեցին հետապնդումներ: Խուսափելով ձերբակալությունից՝ նա վտարանդրվեց ու Մարսել քաղաքում հիմնադրեց «Արմենիա» թերթ: Սկսվեց արևանտահայ ազգային-ազատագրական պայքարի երկրորդ փուլը, որը դարձակետ եղավ Մ. Փորբուգայանի ճակատագրում: Կրթական գործի մշակ ուսուցիչը դարձավ խմբագիր, ապա՝ հեղափոխության քարոզիչ:

Ենթելով իր նախորդների վաստակած փորձի վրա և շարունակելով նրանց կատարած գործը, բայց սկսելով գրեթե նորից և գրեթե միայնակ՝ քաղաքակիրթ ազգերի հայացքի առջև բարձրացրեց հայկական իրականությունը և ոչ թե որպես կարեկցանքի ու խոճահարության, այլ հպարտության, հիացմունքի ու խոնարհումի պահանջ՝ իր ժողովրդի եռթյան, անտանելի ցավի ու ծանր վիճակի հանդեպ: Նրա «Արմենիա»-ն դարձավ այն դարբնոցը, որտեղ ծնվեցին ու ժողովրդին մատուցվեցին Փորբուգայանի ազատախոհական գաղափարները:

⁸⁹ Բացառություն են կազմում Մ. Փորբուգայանի գործունեության 40 և «Արմենիա» թերթի լուսընթայման 25-ամյա հոբելյանների առքիվ Տ. Չեսլիբեանի խմբագրությամբ «Քառասուն տարուամ աշխատաւորը Սկրտիչ Փորբուգալեան» Յարգանքի պակ քառասունամեայ յորելյանի առքի հոդվածների ժողովանուն, Կ. Պոլիս, 1914, Ո. Թորոսեանի հեղինակած «Ո՞վ է Սկրտիչ Փորբուգալեան», Կ. Պոլիս, 1912, գրքույկը և մի քանի հրապարակումներ մանուկում:

⁹⁰ Սեղմագիրն ավելորդ չհանրաբեռնելու համար ծեռնապահ ենք մնում այդ հեղինակներին ու նրանց աշխատությունները թվարկելուց, քանի որ նրանց մասին նանրանասն խոսել ենք Ներածության մեջ:

Հայրենասեր հրապարակագիրը եղավ հայության մեջ առաջին ինքնավստահություն ներշնչողներից մեկը: Գրիշը որպես զենք օգտագործելու, գաղափարակիցներ պատրաստելու և ուժ գոյացնելու իր գործելակերպով նա արեց ամեն ինչ՝ ժողովրդին սրափեցնելու և իր ոտնահարված իրավունքներին տեր դարձնելու համար: Փորձեց հայերին վերադարձնել կիրթ և ազատության ձգող ազգերի շարքը, ծերբազատել նրան խոնարի ռայայի հոգեկերտվածքից: Նրա մեծագույն ներդրումը եղավ այն, որ պատրաստեց «ազատագրութեան մարտիրոսների» մի ող սերունդ, որը պատրաստ էր նահատակվելու հանուն հայրենիքի: Մ. Փորթուգալյանը ցնցեց ժողովրդին, ինչեցք հեղափոխության հումկու ռազմերգը և մեջց պայքարի՝ իր ող կյանքը դարձնելով ուսանելի օրինակ:

Ազգային զարթոնքի և բռնության շրբաները խորտակելու ձգողումները ժողովրդի մեջ սերմանելու և հայրենիքն ազատ տեսնելու սուրբ գործի նվիրյալին բարձր են գնահատել ժամանակակիցներից Դ. Վարուժանը, Վ. Թեքեյանը, Գ. Խաժակը, Ս. Նարանյանը, Ա. Չքյանը, Պազիլ Խանը, Թեոփիկը, Շահրիմանը և ուրիշներ⁹¹ ու հետագա սերունդները:

Մ. Փորթուգալյանի կարևոր դերակատարության մասին են վկայում նրա կողմից գրված և նրան հասցեագրված մեծաքանակ նամակները: Նա ակտիվ նամակագրական կապերի մեջ էր ժամանակակից գրեթե բոլոր նշանավոր հասարակական-քաղաքական և մշակութային գործիչների հետ:

ԳՈՒԽԵ ԵՐԿՐՈՐԴ

«ԱՐՄԵՆԻԱ» ՊԱՐԹԵՐԱԿԱՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Առաջին ենթագլուխ - «Արմենիա» թերթի «Ծրջարերական»-ը:

1885 թ. հունիսի 18-ին «Արմենիա»-ի խմբագրակազմը՝ նախքան թերթի լույսընթայումը, տարածեց մի շրջաբերական, որում հայտարարեց, որ թերթը քաղաքական չէ և ներկայացրեց իր առջև դրված հիմնախնդիրները: Դրանք էին՝

ա) «օտարներու» ուշադրությունը հրավիրել «քորոքահայերու ծանր կացութեան» վրա,

բ) ազատական գաղափարներ տարածել հայության մեջ

գ) կապ ստեղծել աշխարհասփյուռ հայության բոլոր հատվածների միջև՝ հետագայում դրանք ամրապնդելու և խորացնելու տեսլականով,

դ) համակարգել այդ ուժերը և դրանք ուղղորդել հօգուտ հայանպաստ գործերի,

ե) օգտվելով Ֆրանսիական հանրապետության ազատ և մարդասիրական օրենքներից հաստատել այնտեղ հայկական տպարան:

Այնուհետև ավելացվում էր, որ թերթը չի գունազարդի հայության վիճակը, որպեսին կեղծ լավատեսությունը դավաճանություն կլինի ազգային շահերին,

⁹¹ Ste'n Զեօկիւրեան Տ., Կենսագրական գծեր, Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պօլիս, 1914, Թորոսեան Պ., Ո՞վ է Մկրտիչ Փորթուգալեան, Կ. Պօլիս, 1912, «Աւետարեր», «Կոչնակ», «Ազատ թեմ», «Արաքս» և այլ պարբերականներում տպագրված հոդվածներ:

⁹² Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարանում մեզ հաջողվեց գտնել դրանցից մի քանիսը՝ ուղղված Արփիա Արփիարյանին, Արգար Ջովիանիսյանին, Վահան Մալեզյանին, Բագրատ Նավասարդյանին, Մկրտիչ Բարիխուդայանին, տղային՝ Վահան Փորթուգալյանին, մի շարք պարբերականների հնմբագիրներին և այլ (Տե՛ս ԳԱԹ, նոյնանուն ֆոնդերը): Դրանք օգնում են ամբողջական պատկերացում կազմելու նրա մարդկային դրական որակների և ծավալած ազգանկեր գործունեության ու ծրագրերի մասին:

իսկ նրա նյութական ու մտավոր անկումը կհանգեցնի նաև բարոյական անկման և հուսախարություն կառաջացնի: Յայտարարվում էր նաև, որ «Արմենիա»-ն կրոնական թերը չէ, սակայն, նկատի առնելով այն հանգանանքը, որ հայոց եկեղեցին դարեր շարունակ փոխարինել է պետությանը, կիարգի այն: Թերթը լինելու էր հարստահարված և ծայնազուրկ հայության պաշտպանը և հանդես էր գալու «Ազգային Սահմանադրության» բարեփոխման պահանջով, դատապարտելու էր եկեղեցական վերնախավին և հարուստմերին, որոնք հարստահարում էին ժողովրդին և խեղուտ «ազատ մտածումները»: Այնուհետև վստահեցվում էր, որ «Արմենիա»-ն լինելու էր ժողովրդին նվիրված ազատական թերթ:

Երկրորդ ենթագույն - Պարբերականի ընդհանուր նկարագիրը:

Թերթն ուներ «Խմբագրականներ», «Նամականի», «Յայկական հարց», «Գաղթաշխարի», «Մանուլ», «Բանասիրական», «Գովազդ»-ի, «Յայտարարություններ»-ի և այլ կայուն խորագրեր ու բաժիններ:

«Խմբագրականներ»-ի հեղինակը հիմնականում Փորթուգայանն էր: Դրանք միջազգային իրադրության, Օսմանյան կայսրությունում տիրող կացության, հայության անտառնելի վիճակի և ազատության հասնելու ուղիների, Յայկական հարցի, աշխարհամարտի, կամավորական շարժման, Մեծ Եղեռնի, հայոց պետականության վերստեղծման իրատեսական մոտեցումների, հայերի՝ ծանր վիճակից դուրս գալու մասին տագնապալի, սակայն միշտ լավատեսական և ապագայի նկատմամբ անհողողող հավատով տողորված վերլուծություններ էին:

Գողտրիկ, ընթերցողների կողմից սիրված ու ցավաշատ «Նամականի»- ուն ամենօրյա անարդարությունների, հայ գյուղացու տառապանքների, իրավազուրկ վիճակի ու անափ կարոտի մասին էին տեղեկացնում Արևմտյան Յայատանից ու հայաշատ բոլոր անկյուններից ուղարկված նամակները: Այս խորագրի նյութերը ներկայացնում էին ավանդական ու նոր բարքերի հակադրության մեջ մոլորված հայ մարդու ողբերգությունը, Եղեռնի նահասարտու տարիները և օգնություն աղերսող ծիչերը, ինչպես նաև հայության կյանքում գոյություն ունեցող արատավոր երևույթները:

Դիվանագիտական անցուղարձը, պետականության բացակայության պայմաններում այդ գործառույթն իրականացնող եկեղեցու գործունեությունը, ընդ որում, չհանդուրժելով նրա սպասավորների ընչափացությունն ու իշխանությունների հետ գործարիների գնալու դեպքերը, հայտնի քաղաքական գործիչների հայությանը վերաբերող տեսակետները և այլ հարցեր տեղ էին գտնում «Յայկական հարցը» բաժնում: Յայկական հարցի վերաբացմանը գորգընթաց և հատկապես աշխարհամարտին հաջորդած տարիներին այս խորագիրը թերում դաշնում է կարուրագունեներից մեկը:

«Գաղթաշխարի» խորագրի ներքո տպագրվում էին ազատության պայքարին սատարելու գաղութահայության պատրաստականության մասին թղթակցություններ: Ժողովրդին նյութապես օգնելու առօնով թերթի նշանակետ գաղթաշխարիի հայությանը հասցեագրվում էին կոչեր միշտ հայրենիքի կողքին լինելու մասին: Եղեռնից հետո այս բաժնի նյութերում անհանգող ցավ կա, բայց նաև հույս և աներեր հավատ ապագայի հանեաւ:

«Մանուլ» բաժնում արտատպումների, թարգմանությունների ու վկայակոչումների միջոցով քննարկվում էին հայությանը հուզող հարցեր: Այստեղ «Արմենիա»-ի արձագանքներն են այլ թերթերի քննադատական իրավարակումներին, որոնցում, սակայն, ո՞չ մաղձ կա, ո՞չ էլ վիրավորանք հեղինակների հասցեին:

Թերթի «Բանասիրական» բաժինը հարուստ էր գեղարվեստական ոչ ժամանակակից ստեղծագործություններով և հատկապես գրախոսական վերլուծական-ներով: Կան նաև մեծածավալ ստեղծագործություններ, որոնք տպագրվում էին մաս-մաս թերթի տարբեր համարներում:

«Գովազդ» բաժնում առկա էին տարբեր բովանդակության ծանուցումներ, հայտարարություններ և առաջարկներ: Յետեղենիցան տարիներին շատ են կորած հարազատներին փնտորելու մասին հայտարարությունները:

Գիտակցելով, որ թերթը ընթերցանության նկատմամբ սեր ներարկելու, ժողովրդին հովող խնդիրները բարձրացնելու և ազատության համար պայքարի դուրս բերելու կարևոր գործն էր, Փորբուգալյանը նյութական մեծ զոհողությունների գնով լուս էր ընծայում «Արմենիա»-ն: Առաջին ամիսներին նա չէր հակադրվում Օսմանյան կայսրությանը, այլ միայն ընթերցողին ծանոթացնում էր հայության ծանր վիճակին: Թերթը ձեռքբցելով էր անցնում, վարակում ու ոգևորում հայ մարդկանց և ոգեկոչում պայքարի: Կախված հանգանանքներից և դրամի չափից «Արմենիա»-ն լուս էր տեսնում շաբաթը երկու անգամ 800-1300 տպաքանակով: 1893 թ. տվյալներով այն տարածվում էր Պարսկաստանում 166 օրինակ, ԱՄՆ՝ 75, Ռումինիա՝ 37, Բուլղարիա՝ 27, Գերմանիա՝ 27, Եգիպտոս՝ 19, Ֆրանսիա՝ 22, Մեծ Բրիտանիա՝ 17, Յունաստան՝ 8, 100 օրինակ էլ հատավաճառքի միջոցով⁹³: Տպաքանակի վրա բացասականորեն անդրադարձան օսմանյան, ռուսական և պարսկական տերությունների տարածքներ թերթի մուտքի արգելման հրամանագրերը, սակայն այն գաղտնի թափանցում էր նաև այդ երկրներ և 1890-ական թթ. ամենատարածված հայալեզու պարբերականն էր⁹⁴:

«Արմենիա»-ն լուս տեսավ մինչև 1923 թ.: Պարբերականի երկարակեցությանը նպաստում էր «Արմենիաի օժանդակներ» կառույցը: Թերթի լեզուն աշխարհաբար էր: Աչք է շոյում անթերի սրբագրական աշխատանքը: Բոլորին վերափոխելու հավակնող թերթն անտարբեր չէր նաև արևելահայության կյանքին:

Երրորդ ենթագլուխ – Ս. Փորբուգալյան - Արմենական կուսակցություն առնչությունները:

Պատմագիտության մեջ տևական ժամանակ սխալմամբ Արմենական կուսակցության իմնադիր է համարվել Ս. Փորբուգալյանը⁹⁵: Իրականում նա եղավ այդ կուսակցության ստեղծման գաղափարի սերմնացանը, որովհետև Վանից արտաքսված լինելու հանգանանքը նրան թույլ չտվեց այդ գործընթացի

⁹³ Արմենիաի տարածումը, «Արմենիա», թիվ 83, 1893:

⁹⁴ Նոյն տեղում:

⁹⁵ Լազեն Գ., Հայաստան և Հայ Դատը (Վավերագրեր), Կահիրե, 1956, էջ 105-108, Լեօ, Անցեալից, Թիֆլիս, 1925, էջ 47-49, Լեօ, Թիֆլքահայ յեղափոխութեան գաղափարասնութիւնը, հ. Ա. Փարիզ, 1934, էջ 44, Պարսմայան Վ., Պատմագիտական աշխատություններ, Ե., 1985, էջ 211, Ավետիսյան Վ., Հայ հասարակական մտքի գարզացման Մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Ե., 1976, էջ 161-162, Սերոբեան Ս., Հայկական հարցը և անոր փուլերը, Պեյոռուք, 1937, էջ 98-99 և Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղին, Կահիրե, 1948 թ., էջ 184, Իզմիրեան Կ., Հայ ժողովորի քաղաքական ճակատագիրը անցեալին և ներկայիս, Պեյոռուք, 1964, էջ 124-126, Համբարյան Ա., Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990, էջ 123, Վարդանյան Հ., Արևանահայերի ազատագրության հարցը և Հայ հասարակական քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Ե., 1967, էջ 287, Կիրակոսյան Զ., Բուլղարուական դիվանագիտությունը և Հայաստանը, Ե., 1980, էջ 245, Գազանձեան Լ., Վերածնունդ Վան-Վասպուրականի, Բոստոն, 1950, էջ 210 և ուղիշներ:

անմիջական իրականացնողը դառնալ: Այդ են վկայում շատ հուշագիրներ⁹⁶ և վերջին շրջանում՝ հետազոտողների մեծ մասը⁹⁷: Արձանագրենք, որ կուսակցությունը հիմնադրեցին Կեդրոնական վարժարանի սաները՝ Մկրտիչ Ավետիսյանի առաջնորդությամբ:

Չնայած Ս. Ավետիսյանի հետ ունեցած բարեկամությանը՝ Ս. Փորբուգայանը երբեք արմենական չղարձավ հայտարարելով, թե դեմ է կուսակցականությանը, որովհետև դա կրուցանի ազատագրական պայքարը և «վճասակար ու խիստ վտանգավոր է տաճկահայոց շահերին»⁹⁸: Ի վերջո, «պաղութիւն մը ինկավ վարպետին եւ երբեմն իւր անունով երդուող աշակերտներուն միջեւ»⁹⁹, և նրա պահկածքից դժգոհ՝ արմենակաները երես դարձին Փորբուգայանից և սկսեցին մերձենալ այլ ուժերի:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ ԱՐԵՎՄՏԱՐԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՅՈՒՂԻՄ «ԱՐՄԵՆԻԱ»-ՈՒՄ

Առաջին ենթագլուխ-«Արմենիա»-ն արևմտահայերի կացության մասին:
Անկողնակալ, կուսակցականության պարտադրանքներից ազատ «Արմենիա»-ն լուսաբանում էր բոլքական իշխանությունների իրականացրած հարկային ծանր քաղաքականությունը հայության նկատմամբ, որը մշտապես ուղղեկցվում էր բռնարարներով, չարաշահումներով և սպանություններով. «բոլոր միացած խեղճ հային քարշ էին տալիս դեպի կորուստ»¹⁰⁰: Նվաճելով Հայաստանը՝ թուրքերը դադարեցրել էին հայկական քաղաքակրթության զարգացումը և «նորան դարերով յետ մնեցին»¹⁰¹: Թերթի ներկայացմամբ նրանք որոշել էին հենց իր բնում խեղճել հայ ժողովորին ու անում էին ամեն ինչ տնտեսապես տկարացնելու և արյունաբամ անելու համար: Չկարողանալով դիմանալ շարունակվող բռնությանը՝ հայ ժողովորին աստիճանաբար սկսել էր «գաղթել տնօվին»: Իշխանություններն էլ, ժողովրդագրական կտրուկ փոփոխությունների պատրվակով, «Հայաստան» անունը փոխարինել էր «Քուրդիստանով»: Մինչեն «Արմենիան» անկախ վիճակագրական տվյալներով ապացուցում էր, որ այդ փոփոխություն անհիմն էր և սխալ: Թերթի

⁹⁶ Դարրիմյան Ա., նշվ.աշխ., Եկարեան Ա., նշվ. աշխ., Երամեան Յ., նշվ. աշխ., Փափազեան Վ., նշվ. աշխ., Թերթեմեյան Փ., «Կյանքիս հուշերը» (մերենագիր), Հայաստանի պետական պատկերասրան, հուշաձեռագրային բաժին, ֆ. 60, տ. 11, թղթ. 27, 28:

⁹⁷ Դալլարյան Կ., «Արմենականություն» և Սահմանադրականության հետ ՈԱԿ-ի առնչությունների հարցի շուրջ, Թեզիսներ Կրմենական կուսակցության 110-ամյակին նվիրված հորեմանական գիտաժողովի (12 մարտի 1996թ.), Ե., 1996, Կարապետյան Ա., Կրմենական կուսակցություն, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Ե., 1995, Ղազարեան Վ., Կրմենական կուսակցութիւնը, Պեյրութ, 1985, Նարանեան Մ., Կրմենական կուսակցութիւնը ծագումն սկսեալ մինչեւ Սահմանադրական ռամկավար կուսակցութեան կազմութիւնը, Գահիրէ, 1990, Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ 1885-1914թթ., Ե. Կոստանդյանի խմբագրությամբ, Ե., 2003: Սարգսյան Ս., Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.), Ե., 2008, Փափազյան Յ., Մկրտիչ Փորբուգայանը Կրմենական կուսակցության մասին (Ս. Փորբուգայանի նամակն իր ընկեր Մ. Բաղրամյանին), Պատմա-քանակական հանդես, թիվ 1-2, 1996, էջ 319:

⁹⁸ ՀԱԱ, ֆ. 427, գ. 1, գ. 4, թ. 13, տե՛ս նաև «Պայքար», 1951, մարտի 17, թիվ 63:

⁹⁹ Երամեան Յ., Հուշարձան Կան-Վասպուրականի, հ. Ա, 1929, էջ 255:

¹⁰⁰ «Արմենիա», թիվ 98, 1889:

¹⁰¹ «Արմենիա», թիվ 85, 1889:

Աերկայացնամբ Արևմտյան Հայաստանի շուրջ 3 մլն. բնակչության¹⁰² 2,5 մլն-ը հայեր էին, 410 հազարը՝ թուրքեր և քրդեր ու մնացած ազգությունները միասին՝ հազիվ 175 հազար էին¹⁰³: «Մասնավորաբար՝ Էրզրումի, Ալաշկերտի և այլնի մեջ կելմէ 390,000 Հայ՝ 80 հազար Թիւրքի և 10,000 Քիւրդի դէմ. Վաճի մեջ 154,000 Հայ կայ 15,000 Թիւրքի և 21,000 Քիւրդի դէմ. Մուշի մեջ 118,000 Հայ կայ 25,000 Թիւրքի և 10000 Քիւրդի դէմ և այսպէս մնացածք»¹⁰⁴:

Իշխանությունները, շարունակելով իրենց հայահայած քաղաքականությունը, այնուհետև փակեցին ազգային վարժարանների մեջ մասը՝ փորձելով դրանով սպանել հայության ազատատենչ ծգտումներ սերմանողներին: Տեսնելով հայերի «անհնազանդությունը», նրանք դիմում էին ահարեկումների: Զերբակալում ու հետապնդում էին նույնիսկ անմեղ մարդկանց. «ազ ու ծախ որի որ պատահի»¹⁰⁵: «Արմենիա»-ն լուսաբանում էր ստեղծված ծանր կացությունը և դրան դիմագրավելու համար կոչ էր անում համախմբվել հայերին և դուրս գալ պայքարի: Հայ ժողովրդի զարթոնքն ու հեղափոխական տրամադրությունները կանխելու և իրականությունը Եվրոպայից թաքցնելու նպատակով իշխանությունները դիմում էին զանազան խարեւությունների: Օրինակ՝ դիմեցին հանրագրերի խայտառակ պատմությանը, որը նշան էր արդեն «քէ բոլորովին նեղո մնացեր էին Հայենական խնդրի առջեւ»¹⁰⁶: Կան կաշառում էին «փառատենչիկ Հայ էֆենտիմներն», դրամական նվերների ու շնորհների ուժով ստիպում, որ պատրիարքարանը «Եւրոպաբնակ մեր եղաց հրապարակային տրսունջներն հերք պաշտօնապն»¹⁰⁷ և այլն: Այլև չհանդուրժելով դրանք՝ հայերը հակակառավարական ելույթներ էին ձեռնարկում, փողոց դուրս գալիս, որոնց իշխանությունները պատասխանում էին անմեղ մարդկանց կոտորելով:

Երկրորդ ենթագոլուս - Հայ կյանքի թերությունների քննադատությունը «Արմենիա»-ի հրապարակումներում:

«Արմենիա»-ի բնորոշմամբ հայերը խաղաղասեր, անկախության գաղափարի մշտական կրող, աշխատասեր, վաճառական, արհեստավոր, բանկիր, դիվանագետ, ճարպիկ, ստեղծագործ և շինարար ժողովուրդ են:

Հայ ժողովուրդը բնապետությունից ազատվելու համար պայքարի դուրս գալուց առաջ նախ հստակ պիտի իմանա իր երկիրն օտարի կողմից նվաճվելու օրինակութիւն պատճառները, խուսափի ուրիշներին մեղադրելուց և ճանաչի սեփական թերությունները: Ինչպիսիք էին օրինակ՝ ա) օտարի տիրապետությունը երկար հանդուրժելը, բ) անգրագիտությունը և սոցիալական ծանր վիճակը, գ) հայալեզու մանուկի բացակայությունը, դ) նվազ թվաքանակը, ե) քաջ, կազմակերպչական հատկանիշներով օժնված գործիչների երկրից հեռանալը, զ) կիսավայրենի ցեղերի հարևանությունը, է) անմիաբան լինելը, ը)

¹⁰² Իհարկե, այս տվյալները որպէս բացարձակ ճշմարտություն չենք կարող ընդունել, սակայն մի քանի տարբեր աղբյուրների հետ համեմատելիս պարզ է դառնում, որ դրանք շատ մոտ են իրականությանը (օրինակ Sarafian Vahe A., Turkish Armenian and Expartiate Population Statistics, The Armenian Review, IX (Autumn, 1956), 119): Խսկ թէ ինչ չափով, ներկա դեպքում ճշգրտելը մեր խնդիրը չենք համարում:

¹⁰³ «Արմենիա», թիվ 17, 1889:

¹⁰⁴ «Արմենիա», թիվ 96, 1889, տե՛ս նաև Հայոց պատմություն, հ. 3, գիրո 1: Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկորորդ կես-XXIX դարի վերջ), Խմբագրակազմ Ա. Մելքոնյան և ուրիշներ, Ե. էջ 451-452:

¹⁰⁵ «Արմենիա», թիվ 101, 1889:

¹⁰⁶ «Արմենիա», թիվ 81, 1889:

¹⁰⁷ «Արմենիա», թիվ 78, 1889:

հալածանքների հետևանքով թափառական դաշնալը, քանի որ «գաղթականութիւնը ոչ միայն ինքնասպանութիւն էր հայու համար, այլ և ազգասպանութիւն»¹⁰⁸, թ) մեծ տերությունների շահերի հորձանուտում չկողմնորոշվելը, ժ) անտարբերությունն ու բամբասանքի ախտը, ի) «Հայ ազգ կանուանուեին սոսկ լուսաւորչական Հայերը»¹⁰⁹, լ) սեփական սխալների անգիտացումը, խ) միամիտ ու ոյլուրահավատ լինելը, ծ) դիվանագիտության չիմացությունը, կ) առանց լուրջ ճախապատրաս-տության վճռական քայլեր կատարելու սովորությունը, հ) սեփական համոզնունքների նկատմամբ անվստահությունը և հուսահատվելու միտումը, ծ) փառասիրությունը, դ) օտար ափերում հիխորտալը, որով թուրքական իշխանություններին գազագեցնում էին և բաց բողոքում երկիրը պահող անպաշտպան ժողովրդի վրա, ց) եղբայրասպան և ուժեղը ջլատող երևույթները և այլն: Ազգին ինքն իրեն ճանաչել տալը, սխալները շտկելու անհրաժեշտության գիտակցումը ևս «Արմենիա»-ի մեծագույն ավանդներն էին:

Երրորդ ենթագույն - Արևանտահայության դրության արտացոլումը «Արմենիա»-ի «Սամականի»-ում:

«Արմենիա»-ն հայ իրականության մեջ առաջիններից էր, որը մեծ տեղ էր հատկացնում ընթերցողների նամակներին: «Սամականի»¹¹⁰ աշխարհագրությունն ընդգրկում էր երկրագնդի բոլոր հայաշատ երկրները: Ավելի շատ, նամակներ ստացվում էին Արևանտյան Յայաստանից, մասնավորապես Կանից: Դրանք աշխարհին տեղեկացնում էին հայերի սոցիալական ծանր կացության ու ամելանելի վիճակի մասին: Դրանք հայտնում էին, որ իշխանություններն ամենուր հայ հեղափոխականներ փնտրելու պատրվակով դաժանաբար ահարեկում էին ժողովրդին, և շատերը «չկարենալով դիմանալ սովորի տանջանաց, մեռած էին»¹¹¹: «Սամականի»-ի ներկայացմամբ այն վիլայեթները, որտեղ հայերը մեծամասնություն էին կազմում, բնակեցվում էին գաղթականներով, ծանրացվում էին հարկերը, անպատճ բողնվում քողերի բարբարոսությունները, հալածվում էր ամեն մի առաջավոր միտք, անարգվում եկեղեցին, «պաշտօն և արծաթ տալով մատմիչներին Յայ հասարակությունը աւելի անբարոյականացնում»¹¹²: Իսկ երբ հայերը փորձում էին բողոքել, պաշտոնաները լկտիաբար հայտարարում էին «Սուլթանը արտոնուած է Յայերը ջնջելու»¹¹³.

Նամակներն սկզբում սոցիալական բովանդակություն ունեին, հետագայում դրանցում հայտնվեցին քաղաքական պահանջներ, երեմնն էլ՝ պայքարի կոչեր: Նամակագիրները շնչուում էին, որ հայության ազատ ապրելու ձգտումն ավելի ու ավելի պահանջված էր դաշնություն: Նամակների մեծ մասը, գգուշությունից ելնելով, ստորագրվում էին ծածկանուններով: «Սամականի»-ն ներկայացնում էր երկու

¹⁰⁸ Գաղթականութեան վտանգներ, «Արմենիա», թիվ 22, 1893:

¹⁰⁹ Յայ ազգը եւ եկեղեցին, «Արմենիա», թիվ 2, 1906:

¹¹⁰ Այս խորագիր ներք տպագրվում էին ոչ միայն ընթերցողների, համակիրների, այլև թերթի տեղական, արտսահաստիրային թրավիցների նամակ-թրավակցությունները, որոնք բույրոն էլ պատշաճ տեսի էին թերվում ու սրբագրվում խմբագրակազմի կողմից: Խնճնսատիրայան հասկանալի է նաև, որ նամակների գգալի մասը գրվում էր խմբագրության պատճերի ներսում, բայց ներկայացվում իրու որևէ տեղից ուղարկված: Ի դեպ, այս երևույթը հասուն է եղել ոչ միայն «Արմենիա»-ին:

¹¹¹ «Արմենիա», թիվ 13, 1890:

¹¹² Նույն տեղում:

¹¹³ Նույն տեղում:

դարերի սահմանագծին բարիկադի տարբեր կողմերում հայտնված ուժեղ Օսմանյան կայսրության և թույլ ու անկազմակերպ հայ ժողովրդին և նրանց միջև ցցված «ով-ումի» բախտորոշ հարցը: Շեշտում, որ իշխանությունները հայության իրենց բնօրորանից դուրս մղելու համար ձեռնարկեցին մի շարք քայլեր. ա) աննախաղեաց խստացրին հարկերը, խւեցին ու յուրացրին մեծաքանակ հայապատկան հողեր, որի արդյունքում հայերը հոժ խմբերով արտագաղթում էին, բ) հովանավորում էին քրդերի ապօրինությունները, գ) քարոզում կրոնական անհամուրժողականություն, դ) փակում էին հայկական կրթօջախներն ու թերթերը, հալածում հոգևորականությանը, ե) հայերին ֆիզիկապես ոչնչացնում էին և միջազգային հանրությանը հավատացնում, թե հայն ապստամք է, դրա համար են պատժում:

Այս ամենին «Արմենիա»-ն փորձում էր հակադրել բարեփոխումների իր տեսլականը՝ ձերքագատվել ներսից կրօնող թերություններից, համախմբվել, լավ նախապատրաստվել և հետո միայն դուրս գալ պայքարի: «Նամականի»-ին XIX դարի վերջի և XX դարի առաջին երկու տասնամյակների հայ իրականության կենդանի հուշարձան է, փաստառատ ու վստահելի սկզբնաղյուր, մի կողմից հայի հոգու ճիչ, խտացած ցավ, բողոք ու պարսավանք անօրենների հասցեին, իսկ մյուս կողմից՝ հայության երազանքների շտեմարան, զրավոր հավատ՝ ապագայի նկատմամբ:

ԳԼՈՒԽ IV

ԱՐԵՎՄՏԱՅԱՅԵՐԻ ԻՆՔՍՈՐՈՇՄԱՆ ԽՄԴԻՐԸ «ԱՐՄԵՆԻԱ»-Ի ԷԶԵՐՈՒՄ

Առաջին ենթագլուխ - Ս. Փորբուգայանի տեսակետները արևմտահայության ազատագրության հարցի վերաբերյալ:

Ս. Փորբուգայանի աշխարհայացքը դրսնորվում էր ինչպես իր գրվածքներում, այնպես էլ «Արմենիայի» գաղափարախոսական թեմայով հրապարակումներում: Քանի որ, անկախ այն բանից, թե ովքեր էին հեղինակները, և ինչ բովանդակություն ունեին հրապարակված նյութերը, թերթի վերջնական դիմագիծն ու գաղափարական ուղղվածությունը որոշում էր խմբագիրը: Ս. Փորբուգայանի կյանքն ու գործունեությունը լավ ուսումնասիրված չինելու պատճառով նրա գաղափարախոսությունը հայ պատմագիտության կողմից ըստ արժանվույն չի գնահատվել: Իսկ ժամանակին հնչած «պահպանողական», «քամելեոն», «ժամանակեն ետ մնացած» և նմանատիպ այլ գնահատականներն ուսումնասիրված աղբյուրների նյութերով չեն հաստատվում:

Իրեն Օսմանյան կայսրության հավատարիմ հպատակ համարող Ս. Փորբուգայանը միամտաբար կարծում էր, որ եթե հայությանը հալածելու մասին սուլթանն իմանա, ամեն ինչ կփոխի, և փորձում էր դա անել «Արմենիա»-ով: Նա հայոց կարգավիճակը Ստ. Նազարյանի նման երկարմատ էր պատկերացնում: Հային քաղաքականապես բուրք էր համարում, մշակույթով՝ հայ և փորձում հաշտեցնել համապետականն ու ազգայինը: Ժխուում էր արտաքին դիմորոշումն ու հային կաղապարում-պահում կայսրության մեջ և նրանից ակնկալում վիճակի բարելավում:

XIX դարի 80-ական թթ. հայ ազատախոհ գործիչները իիմնականում համախմբվել էին երեք պարբերականների շուրջ և դավանում էին նրանց ուղղություններին: Լոնդոնի «Հայաստանը», որին ծայնակցում էր Վառնայի

«Իրավունքը»¹¹⁴, մերժելով հեղափոխության միջոցով հայ ժողովրդին ազատագրելու թեզը, որդեգրել էր մեծ տերություններին դիմումներ հելու և նրանցից օգնություն ակնկալելու գործելակերպը: Մյուսները «Հնչակ»-ն ու «Դրշակ»-ն էին, որոնք, եվրոպական առաջադիմական գաղափարախոսություններից ազդեցիլով, որդեգրել էին հեղափոխության ուղին: Ս. Փորթուգայանը հստակ և ավարտուն տեսրով մշակված ուղղություն չուներ, և «Արմենիա»-ում կողըկողըին հանդես էին գալիս տարբեր քաղաքական դավանանքների տեր անձինք: Մի դեպքում հանդես գալով «հավատարիմ օսմանյան քաղաքացու», մյուս դեպքում՝ ապատամրության և գենքի ուժով ազատություն նվաճելու, ինչպես նաև՝ մեծ տերություններին դիմումներ հելու կոչերով՝ «Արմենիա»-ն ու նրա խմբագիրը լողում էին նշված ուղղությունների միջև:

Կարծ ժամանակ անց Փորթուգայանը հիասքափվեց իշխանություններից և հայ ժողովրդին կոչ արեց բարձրացնել ձայնը հնքնապաշտպանվելու համար: Նրա քաղաքացիական պարտքի գիտակցումն ու նվիրվածությունը սկսեցին երերայ: Այն բանից հետո, երբ թերթի մուտքը Թուրքիա և Ռուսաստան արգելվեց, «Արմենիա»-ի առաջին համարների խոհեմ ու գգուշավոր լեզուն փոխվեց՝ դարձավ սուր ու փշոտ: Փորթուգայանն աստիճանաբար համոզվեց այն պարզ ծշմարտության մեջ, որ սուլթանն ինքն է հարստահարողն ու սպանողը: Նրա համար ակնհայտ դարձավ, որ արյունով ու ավազակությամբ ստեղծված Օսմանյան կայսրության ողջ պատմությունը որևէ հույս չէր ներշնչում, որ նրանք կփոխվեին: Բարենորոգումներ կատարելու նրանց բոլոր փորձերն անհաջող բենականացված ներկայացումներ էին և կատարվում էին սոսկ արտաքին աշխարհին խաբելու համար: Թուրքերը համոզված էին, որ եթե հայերը գենք կրելու իրավունք ստանային և ինքնավար դառնային, Բուլղարիայի նման կվտանգեին իրենց պետության գոյությունը, դրա համար էլ անում էին ամեն ինչ, որ հայը «վերանայ աշխարհի երեսն»¹¹⁵: Յետևարար, միայն «Յայաստանցի Յայը և ոչ ուրիշը...»¹¹⁶ պիտի լուծեր Յայկական հարցը: Յոգերանական ու քաղաքա-կան այս մրնողորտում Ս. Փորթուգայանի հայացքներում կտրուկ շրջադարձ կատարվեց: Նրա մեջ ծնվեց հեղափոխություն բարձրացնելու գաղափարը: Ավարտվեց «հաւատարիմ հպատակութեան» շրջանը, և նա փորձեց խճել կապը պետության հետ: Օսմանյան քաղաքացին տեղի տվեց ազգային գործչին:

Փորթուգայանն իրատեսորեն հայ ազատագրական շարժումը բաժանել է երեք շրջանի՝ 1860-ականներից սկսված՝ Սահմանադրական, 1880-ականներից՝ Ինքնավարական և 1890-ականներից՝ Յեղափոխական¹¹⁷: Առաջինում ծնված, երկրորդում՝ հասունացած և երրորդում հմաստնացած Փորթուգայանը ցավ էր ապրում, որ հայն ընտրել է պայքարի ամենապասիկ՝ գաղքի ծնը, և այդ պայքառում բացարկի դեր էր վերապահում հասարակ ժողովրդին, որից նրա դավանած ուսմունքն ստանում էր ընդգծված ժողովրդավարական,

¹¹⁴ Մինչ «Արմենիա»-ի լույսընծայումը, 1885 թ. սկզբներից շաբաթը երկու անգամ հայերեն և ֆրանսերեն Բուլղարիայի Կառնա քաղաքում լույս էր տեսնում ազգային, հասարակական քաղաքական «Իրաւունք» թերթը, որն ըստ ենթյան ազատախոհական թերթերի առաջնեկան է: Սակայն փոքր տպաքանակն ու հետևողների խիստ սակավ լինելը թույլ են տալիս ասելու, որ հայ քաղաքական մամուլի առաջնեկան իրականում «Արմենիա»-ն է:

¹¹⁵ «Արմենիա»ի յուշարար, Ա տարեկան 1885-86, Մարտել, 1890, էջ 35:

¹¹⁶ «Արմենիա», թիվ 55, 1886:

¹¹⁷ Յետախասաղա շարժումը, «Արմենիա», թիվ 25, 1893:

մարդասիրական բնույթ: Այս առումով նա մոտենում էր հայ ազատագրական պայքարի գաղափարական նախակարապետներ Նալբանդյանին, Խոհմյանին, Արծրունուն, Ռաֆֆուն, Պատկանյանին և մյուս մեծերին:

Փորբուգայանն առանձնացնում էր մի քանի կարևոր գործոններ, որոնք կօգնեին հայ մարդուն կերտել ազատ Հայաստանի հիմքերը: Նախ՝ խորապես ճանաչել Հայաստանը, ապա՝ գնալ դեպի ժողովուրդը, ներկայացնել մարդկանց իրենց տիտուր կացությունը, ցույց տալ մեղավորներին¹¹⁸, հետո կազմակերպվել գինվել և «քաղաքարական յեղափոխութիւն յարուցանել Արմենիայի մէջ»¹¹⁹:

XIX դարի 80-ական թթ. Ս. Փորբուգայանի հեղինակությունը շատ մեծ էր. նրա սաները Վանում հիմնեցին Արմենական կուսակցությունը, իսկ արտասահմանում ուսանող Երիտասարդությունը հավաքվել էր «Արմենիա»-ի շուրջ: Սակայն դա երկար չունեց, որովհետո նա իր նկարագրով «յեղափոխական գաղափարների սերմնացան էր, բայց երբեք յեղափոխական գործիչ»¹²⁰: 80-ական թթ. Երկրորդ Կեսից ասպարեզ հաջած Երիտասարդությունը համարելով, որ հեղափոխության գաղափարն արդեն մշակված էր, ուստի պետք էր այն փոխադրել արևմտահայ իրականություն, պատվաստել այնտեղ ու իրականացնել այդ հեղափոխությունը: Արմատական թէը (ապագա հնչակյանները) Փորբուգայանին առաջարկեց «հայ յեղափոխական կուսակցութիւն նը հիմնել»¹²¹: Վերջինս հայտարարեց, «քէ ինք յեղափոխական չէ, այլ՝ խաղաղ առաջադիմական»¹²² և հիմնեց «Հայաստանի Զավակների Միությունը», որի նպատակն էր կարող ուժեր գոյացնել և հետո միայն հեղափոխության դրոշ պարզել: Կատահ չլինելով, որ Հայաստանը հնարավոր է ազատագրել գենքի ուժով, Փորբուգայանը սպասողական դիրք էր գրավել, այդ պատճառով էլ չկարողացավ ժողովորդական զանգվածներին տանել իր հետևից:

Այդ տարիներին հայության մեջ խոսքն ավելի շատ էր, քան գործը: Շատերը կոչ էին անում համախմբվել, միասնաբար հակասութանական ճակատ ստեղծել, սակայն գործնականում անում էին հակառակը: Արյունքում միջոցները փոշիանում էին, ուժերը՝ ջլատվում: Նոր սերունդն էր, որ ջանում էր հաշտեցնել ազգային հարցն ու սոցիալիզմի վարդապետությունը, չեր կարող համուլտրել չափավոր և զգուշավոր, վարչական հճճավարության պահանջով և կցկոուր տնտեսական մոտեցումներով ներկայացող Ս. Փորբուգայանին: Նա իրենց համար այլևս ժամկետանց էր և նոյնին հետադեմ: Այդ հակասություններին և Երկար տարիներ Հայաստանից հեռու լինելու ու այնտեղի փոփոխություններին անտեղյակ լինելու պատճառով 90-ական թթ. վերջերին Ս. Փորբուգայանն իր փօքրաբիկ համակիրների հետ գրեթե մենակ մնաց:

¹¹⁸ Այս թեզը շատ նման է ուսւական իրականության մեջ XIX դարի վերջին մեծ տարածում գտած նարոդնիկական շարժմանը: Չնայած Երկար փնտրություններին մեզ չհաջողվեց գտնել որանցում կապի կամ փոխազդեցության մասին որևէ վկայություն: Մնում է եղակացնել, որ Երկու Երկրներում միասնամնակ և իրադիր անկախ նույնամնան գաղափարախոսություններ են ծնվել: Ավելացնեմք, որ նմանատիպ դրսուրումներ նկատվել են նաև այլ ժողովուրդների ազատագրական նախառումների ընթացքում:

¹¹⁹ «Արմենիա»յի յուշարար, Ա տարեկան 1885-86, Սարսել, 1890, էջ 74:

¹²⁰ Նոյն տեղում, էջ 157:

¹²¹ Տաճարական Ս., իմ յուշերես, խմբագրեց եւ ծանօթագրեց Վաշէ Ղազարեան, Պէյրութ, 1985, էջ 28:

¹²² Նոյն տեղում:

Երկրորդ ենթագլուխ – Ազգային կուսակցությունների հայրենիքի ազատագրության հիմնահարցի վերաբերյալ դիրքորոշումները և դրանց արտացոլումը «Արմենիա»-ի էջերում:

Ի սկզբանե «Արմենիա»-ն բաց էր հայոց ճակատագրով մտահոգ գաղափարական բոլոր ուղղությունների առջև: Սակայն ազատության ուղիների վերաբերյալ քննարկումների ընթացքում ծևավորվեցին երեք հիմնական նոտեցումներ՝ ա) մեծ տերությունների օգնությամբ, բ) աստիճանական բարեփոխումների և գ) անհապաղ հեղափոխություն սկսելու: Ծայր առաջ բանավեճը տեղ գտավ «Արմենիա»-ի, իսկ հետագայում՝ «Հայաստան»¹²³, «Նշակ»¹²⁴, «Հայք»¹²⁵ և նրանց արբանյակներ հանդիսացող այլ պարբերականների էջերում: Տարածայնություններն աստիճանաբար խորացան և վերածվեցին հականարտության: Հիմնական պատճառն ազգի գոյության հարցականի պայմաններում նորեկների կողմից ազգային կարողություններն ու «Արմենիա»-ն «ընկերվարական դատին ծառայեցնելու»¹²⁶ կոչերն էին:

Մ. Փորբուգայանը ժամանակավրեա էր համարում «Նշակ»-ի սոցիալիզմը, քանի գտնում էր, որ Արևատյան Հայաստանում գործարաններ ու բանվորներ չկային, և ժողովրդին դրանով «հեղափոխութեան գոգույ», դասակարգային պառակտում առաջ բերելը տղայանտութիւն է»¹²⁷: Միաժամանակ Փորբուգայանը խոստովանում էր և ափսոսանք հայտնում, որ նրանց շարքերուն էլ իրենց ազգօգուտ գործերի համար մեծարանքի արժանի գործիչներ կան:

Ցավով արձանագրելով, որ հայ ազգը աղքատ է ու հետամնաց, ստրկական բնավորություն ունի, անզեն է, թշնամիներով շրջապատված և «միաբանութիւն հաստատելն ալ դժուար»¹²⁸, բայց մեծ ջանքերի գնով աստիճանաբար վիճակը փոխվել է: Նա շեշտում էր, որ երբ Հայաստանի անկախության նպատակներ հետապնդող շարժումն սկսվել էր, ո՞չ «Նշակը» կար, ո՞չ «Դիօշակը», ո՞չ էլ նրանց ինտերնացիոնալիզմը:

«Արմենիա»-ն քննադատում էր նրանց, ովքեր «ուժասպառ էին դարձնում հայ ժողովուրդը»¹²⁹ և փորձում ազատագրական շարժումներն օգտագործել իրեն կամուրջ «ընկերվարական» նպատակներին հասնելու համար: «ոչ չի կրնար մասնակցել սոցիալական և դասակարգային կրիվներին, քանի ազգային դատը ավելի տագնապալի է, և մեր ուժերը՝ երկու գործի համար անբավարար»¹³⁰:

¹²³ «Հայաստան»-ը Հայկական հայրենասիրաց ընկերության, ապա՝ Անգլիայի հայկական ընկերության երկշաբարթերն էր, լույս է տեսել 1888-1892 թթ. Լոնդոնում: Խմբագիր Մ. Ռովազյան:

¹²⁴ «Նշակ» ՄՊ Յօշակյան կուսակցության կենտրոնական օրգան: Հիմնադիր՝ Ավ. Նազարենիսկան: Խմբագրություն Կենտրոնական վաշուուրյան: Լույս է տեսել մնանակ 1887-1891 թթ., Աքենքում 1892-1894, Փարիզում 1891, 1894, 1904-1915, Լոնդոնում 1894-1904, Փրովինցիանում 1935-1940 թթ.: Տես Հայ պարբերական մամուլը մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմեց՝ Մ. Բաբլոյան, Ե., 1986, էջ 45:

¹²⁵ «Հայկական միության» «Հայք» գրական և քաղաքական թերթի խմբագիրն էր Մ. Սմբատ Գարբրիելյան, տես Հայ պարբերական մամուլը մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմեց՝ Մ. Բաբլոյան, Ե., 1986), էջ 47:

¹²⁶ «Արմենիա», թիվ 53, 1894:

¹²⁷ «Արմենիա», թիվ 43, 1893:

¹²⁸ Մեր յուսեր, «Արմենիա», թիվ 62, 1894:

¹²⁹ Սույն տեղում:

¹³⁰ Տասնականայ Դ., Դ. Դաշնակցությունը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհանուր ժողով (1890-1924), էջ 64:

Դակասելով իր՝ նախկինում հայտնած տեսակետներին՝ Փորբուգայանը գրում էր, որ իրենք այն կարծիքին չեն, որ «կուսակցություն» բառը հոնանիշ է «անմիաբանության» և երբեք «հակառակ չէ եղած այդ գաղափարին, այլ նոյն իսկ անհրաժեշտութիւն մը կը համարէն զայն»¹³¹: Խոսելով ազգային կուսակցությունների մասին՝ նա գտնում էր, որ կուրորեն հետևելով հճախաններին շատ զոհեր տվեցինք, իսկ նոյնը չի կարելի ասել դաշնակցականների մասին:

Երրորդ ենթագլուխ - Արևանտահայության վիճակի բարեփոխումների վերաբերյալ մեծ տերությունների դիրքորոշումների լուսաբանումը «Արմենիա»-ում:

Մեծ տերություններ ասելով թերը նկատի ուներ Բրիտանական, Օսմանյան ու Ռուսական կայսրությունները: Ներկայացնելով, որ XIX և XX դարերի սահմանագին հայությունը բաժանված էր անգլիականների և ռուսականների¹³², թերը տեղեկացնում էր, որ համեմատելիս ճնշող մեծամասնությունը ռուսամետ էր: Պատճական էր կուրուրան կատարելով՝ թերի վերլուծաբանները նշում էին, որ XVII դարի վերջերից հայ ժողովուրդն աստիճանաբար հայացքը հառում էր դեպի հյուսիս, իսկ Ռուսաստանն այդ նվիրական ձգտումներն ի շահ իրեն էր օգտագործում: Վկայակոչելով 1894 թ. պաշտոնական տվյալները՝ Ս. Փորբուգայանը նշում էր, որ եթե Օսմանյան կայսրությունում հայերի թիվը աստիճանաբար նվազում էր, ապա ռուսականում բնակվողներին՝ ավելանում¹³³: Դայնց եկեղեցու հոգերի բռնագրավման վերաբերյալ ցարիզմի հայտնի ակտը խիստ զայրացրեց հայությանը, և նա իր ճայնը բարձրացրեց ի պաշտպանություն եկեղեցու իրավունքների: Առաջին շարքերում գտնվող «Արմենիա»-ն և իր քննադատության սլաքն ուղղեց դեպի Ռուսաստան: Արիթից օգտվելով անգլիականները հարց բարձրացրին. «Մի՞թէ տակաւին կարելի է Ռուսիաի վրայ յոյս դնել»¹³⁴: Ռուսաստերները պատասխանեցին, որ Անգլիան բոլոր ժամանակներում, խոսելուց բացի, հօգուտ Յայկական հարցի որևէ քայլ չէր կատարել, մինչդեռ Ռուսաստանի «լախտը հաճախ է հջած Թիրքի գլխին»¹³⁵: Վերջիններիս կարծիքով Բեռլինի 61-րդ հոդվածն էլ ռուսները նվիրեցին հայերին, հետևապես պետք չէ խեթ նայել նրանց, այլ հարկավոր է հնարավորինս օգտվել նրանց բարեհաջությունից: Առավել ևս, որ վերջին երկու հարյուր տարվա ընթացքում հայ ազգն ամեն ինչ արել է ռուսական հայրանակներ ապահովելու համար: Բուռ երկրում ազգի ազգատագրական ասպարեզը տեսնող «Արմենիա»-ն կոչ էր անում համախմբվել և տեր կանգնել իր շահերին: Դակարակ դեպքում մյուսներն այն կօգտագործեն հօգուտ իրենց:

Երբեմն «Արմենիա»-ն անդրադառնում էր նաև պարսկահայերի խնդրին և նրանց վիճակը համեմատում Թուրքիայում և Ռուսաստանում բնակվող հայերի դրության հետ: Թերի տեսաբանների կարծիքով պարսկահայությունը նիշակն էր, որ քաղաքական հալածանքների չեն Ենթարկվում, բայց «տեղացի հասարակությունը չէ կրցած ըմբռնել իր այդ նպաստառը կացութիւն»¹³⁶ և օգուտներ քաղել դրանից: «Արմենիա»-ն հայ իրականության մեջ այս փոքրարիկ պարբերականներից մեկը եղավ, որ երբեք չկորցրեց իրատեսության զգացումը, չապավինեց

¹³¹ Ազգային գաղափարական կուսակցութիւններ, «Արմենիա», թիվ 10, 1899:

¹³² Ռուսիա, Անգլիա եւ Յայաստան, «Արմենիա», թիվ 39, 1894:

¹³³ Նոյն տեղում:

¹³⁴ Ռուսիա, Անգլիա եւ Յայաստան, «Արմենիա», թիվ 39, 1894:

¹³⁵ Նոյն տեղում:

¹³⁶ Պարսկահայերի ապագան, «Արմենիա», թիվ 8, 1905:

Եվրոպական տերությունների ու նրանց դիվանագետների մին խոստումներին: Դայ հասարակայնության առաջնորդեց ճշմարիտ ուղիով ու արժեքներով՝ ժամանակի ընթացքում այս կամ այն պետության նկատմամբ ստեղծված իրադրությունից կախված երեմն վերաբերունքը փոխելով:

ԳԼՈՒԽ V

«ԱՐՄԵՆԻԱ» ԹԵՐԹԸ 1908 – 1923 ԹԹ.

Առաջին ենթագլուխ - «Արմենիա»-ն հետսահմանադրական Օսմանյան կայսրությունում տիրող վիճակի մասին:

«Արմենիա»-ի ներկայացմանը հեղաշրջումից խանդավառված հայությունը հավատաց երիտրութերի խոստումներին և ցնծում էր. «գայլ ու գառը կրհամբուրվեին»¹³⁷: Իսկ երկրի սոցիալ-տնտեսական վիճակը շարունակում էր մնալ ծանր, հայերինը՝ օրիսասական: Ազգայնանորությունը պետական քաղաքականություն դարձրած երիտրութերը որդեգրեցին պանխաղմազմի և պանթուրքիզմի ծրագրերը և ավելի սաստկացրին ազգային հալածանքները: Սուլթանական վարչակարգը գրեթե չվերափոխվեց: Դայերի «հույսերը քաղցր երազներ էին, և հայասպան Համիդի պատմութանը ժառանգություն էր հասել թալեար-ենվերներին»¹³⁸: Ըստ թերթի՝ կայսրությունում մտքերի հեղաշրջում էր ամիրաթշտ, որն իսպառ բացակայում էր:

Շուտով հայերին համակեց խոր հիասթափություն, քանի որ երիտրութերն ավելի դաժան հակահայ քաղաքականություն էին վարում: Իշխանությունն ավագակի փոխարեն «կողոպտուղ Հայը կպատժեր»¹³⁹: Քրեթը շարունակում էին անպատճ մնալ և ավելի վտանգավոր դաշնալ: Փորթուգայանը ցավում էր իր երկրի թուլության համար, որի պատճառը կայսրության ժողովուրդներին հավասար իրավունքներ չտալը էր¹⁴⁰: «Արմենիան» գրում էր, որ 1908 թ. հեղաշրջմանն ու երիտրութերի մեղրածոր խոստումներին գաղութահայությունը և հավատաց, բայց նույնքան արագ էլ հիասթափվեց: Թերթն արձանագրեց՝ «խարուցանք» և դրա գլխավոր պատճառ համարեց տգիտությունը, որը «մարդը դիւրահաւան կը դարձում»¹⁴¹: Արտագաղթը սահմանադրության հռչակումից հետո էլ շարունակվեց, քանի որ երկրում ապահովություն չկար¹⁴²:

Երկրորդ ենթագլուխ - «Արմենիա»-ի տեսակետները հայության ազատագրության ուղիների վերաբերյալ (1908-1920-ական թթ.):

«Արմենիայի» «Ուսէ դար» հանարվող առաջին տասնամյակից հետո նրա գաղափարախոսությունը հետագայում նե՞ծ փոփոխություններ չկրեց: Այն ավելի շատ արձագանքում էր ընթացիկ իրադարձություններին և տեսական նոր ուղղություններ չեր որդեգրում: Թերթը հայության վիճակի բարելավման ճանապարհ էր համարում նրա ցավերի մասին բարձրաձայնելը, անդադր աշխատելն ու կրթելը: Ազատության գաղափարը տարածելու կարևոր միջոց էր համարում մամուլը և նշում, որ հետսահմանադրական շրջանում ևս «չափառորությունը օգտակար է և ՓՐԿԱՆՔ, իսկ չափազանցութիւնը՝ վնասակար և ՓՈՐՉԱՆՔ»¹⁴³: Ազգային խնդիրներում հաջողություններ արձանագրելու համար

¹³⁷ Երամյան Յ., նշվ. աշխ., էջ 92-93:

¹³⁸ Սարհաղյան Ս., Կյանքիս հուշերից, Ե., 2007, էջ 32:

¹³⁹ «Արմենիա», թիվ 46, 1912:

¹⁴⁰ «Արմենիա», թիվ 28, 1912:

¹⁴¹ Նոյն տեղում:

¹⁴² «Արմենիա», թիվ 6, 1909:

¹⁴³ «Արմենիա», թիվ 9, 1913:

«Արմենիա»-ն առաջարկում էր, չկորցնելով չափի զգացումը, գործել գիշեր ու ցերեկ և որպես դեղատոնս առաջարկում էր կայուն հիմքերի վրա ազգային միության ստեղծումը: Առաջարկում էր հեռու մնալ անձնական շարժառիթներից, անհշխանությունից, լինել զգույշ, բարձր պահել ցեղի ոգին, քանի որ կոքերը կտանեն անխուսափելի կործանման¹⁴⁴: Թերթը վտանգավոր էր համարում արևատահայերի, արևելահայերի ու գաղթաշխարիի հայության միջև առաջացած խորթությունը, «իրարմէ անտեղեակ կացութիւնը»¹⁴⁵:

Երիտրութերի հռչակած ազատությունը հայ Երիտասարդության մի մասն ընկալեց բացարձակ իմաստով և փորձում էր եկեղեցիները դարձնել հանրահավաքների հավաքատեղի, որին մյուս մասը դեմ էր: Այդ երկու քաենաների միջև Կ.Պոլսում ծայր առավ և գավառներում տարածվեց «բաց ու գոց»-ի խնդիր անունով անզիջում պայքար: Բացի կողմնակիցները հիմնականուն արտասահմանում ուսանած դաշնակցական Երիտասարդությունն էր: Նրանց մի մասն անկեղծ մղումներով, իսկ ոճանք էլ՝ նորովի երևալու ձգտումներով, խախտում էին սովորույթի ուժով սրբագրոծված որոշ նորմեր: «Արմենիա»-ն փորձում էր հաշտեցնել կողմներին և հասարակությանը գերծ պահել ավելորդ լարվածությունից և պարզաբանում էր, որ «բաց ու գոց»-ը կուսակցությունների համար ընդամենը առիթ էր՝ ժողովրդին խարելու և իրենց կողմը գրավելու համար, և կոչ էր անում հեռու մնալ դրանից:

Հետեղեանյան տարիներին թերթում երևացին նաև ապագային վերաբերող հրապարակումներ, սակայն որանք հիմնականում հուսալքված ժողովրդին ապրելու կոչ-հորդումներ էին¹⁴⁶: Յայատանի խորհրդայնացումից հետո «Արմենիան» համարելով, որ հայության փրկության ուղին տվյալ պահին դա էր և արձանագրելով, որ «պիտի ապահնինք դարձեալ յոյսին որ այսօր Երևանը կը ներշնչէ: Չոն կայ խաղաղութիւն և կայ ուրեմն կարելիութիւն զօրանալու»¹⁴⁷, սկսեց հայացը հարել դեպի նոր Յայատանը:

Երրորդ ենթագույն - Յայկական հարցի տեսլականը «Արմենիա»-ի էջերում:

«Արմենիա» թերթը հետսահմանադրական շրջանում ևս մեծ տեղ էր հատկացնում կրկին օրախնդիր դարձած Յայկական հարցին և իրադարձությունների զարգացմանը զուգընթաց, տարբեր մոտեցումներ որդեգրելով, փորձում լուծումներ առաջարկել: Իսկ երբ հայկական բարենորոգումների ծրագիրը Ուսասատանի պնդմանը դրվեց շրջանարության մեջ, անգլո-ռուսական բավկիննում տարրութերվող թերթի տեսաբանների շրջանում ավելի գերակշռող դարձան ռուսամենու դիրքորոշումները:

Ներկայացնելով մեծ տերությունների նվաճողական նկրտումները՝ թերթն զգուշացնում էր, որ Յայկական հարցը նրանց ծերին ընդամենը միշտ է թուրքիայից հյուրախի պատասխեր պոկելու համար: Ընդգծվում էր, որ վճռորոշ դերակատարություն ունեն Անգլիան, Ռուսաստանը և Գերմանիան: Զգուշացնելով հայերին հերթական անգամ խստումներից զգինովանալ և ցանկալին չընդունել իրականության փոխարեն թերթը կոչ էր անում խորությանը ուսումնասիրել ամեն մանրութ և նոր միայն ասպարեզ նետվել:

Փորթուգալյանն առաջարկում էր Յայկական հարցի լուծման իր տարերակը՝ Ուսասատանի քաղաքականության դեմ որպես պատվար

¹⁴⁴ «Արմենիա», թիվ 46, 1917:

¹⁴⁵ «Արմենիա», թիվ 10, 1917:

¹⁴⁶ «Արմենիա», թիվ 12, 1922:

¹⁴⁷ «Արմենիա», թիվ 23, 1923:

Օսմանյան կայսրության սահմաններում ստեղծել «ուշ Հայկական առանձնաշնորհեալ վարչութիւն»¹⁴⁸: Հոդվածագիր Կ. Հակոբյանն էլ կարծում էր, որ «ամեն ազգի ապագան իւր ափին մէջն է. նա կրնայ արիանալով բարգաւաճիլ և կրնայ ստրկանալ և կորսնցումել իւր հոգևոր յատկութիւնները»¹⁴⁹, և առաջարկում ազգովին լուծել խնդիրը: Հայկական հարցի արդարացի լուծնան տեսակետից «Արմենիա»-ն մեծ հույսեր էր կապում Ազգային պատվիրակության հետ, պաշտպանում էր նրա դրույթները, տպագրում Պ. Նուբարի արտասանած ճառերը, լուսաբանում գործունեությունը:

Ցեղասպանության ցավից մոլորված «Արմենիա»-ն, մեծ դժվարությամբ վերագտնելով կորովը, Ուստաստանի հաղբանակներին գուգընթաց, նոր քափով սկսեց քննարկել խնդիրը: Նախկին գուտ տեսական քննարկումներին փոխարինելու եկան հուսալեցուն և պահանջատիրական հրապարակումներ: Ոգևորությունն ավելի մեծացավ Հայաստանի Առաջին հանրապետության հոչակումից հետո:

1917 թ. ուստական հեղափոխությունները շփոթեցրել էին «Արմենիա»-ին: Հստակ չպատկերացնելով Հայկական հարցի նկատմամբ նրանց վերաբերմունքը՝ թերթը լողում էր տարաքնույթ տեսակետների հորդանուտում: Իսկ երբ հոչակվեց ՅՅ Առաջին հանրապետությունը, Հայկական հարցը, թերթի խմբագրակազմի համար պահպանելով իր հիմնական բովանդակությունը, զգալիորեն ձևափոխվեց: Նորանկախ Հանրապետությունն սկզբից ևեր փորձեց դառնալ հարցի դրոշակակիրն ու առաքելություն ստանձնեց այն հասցել իր վերջնական հանգրվանին, սակայն մինյանց հաջորդող ոչ բարենպաստ իրավիճակները խոչընդոտում էին, և հարցը մտնում էր փակուղի: «Արմենիա»-ն երբեմն ոգևորվում, իսկ ավելի հաճախ հուսախարություն էր ապրում: Ի վերջո, ելեւլով հայության փրկության մեջնակետից, ողջունեց Հայաստանի խորհրդայնացումը՝ համարելով, որ Ուստաստանի հովանու ներք հնարավոր կլիմեր պահպանել հայության մնացած փոքրաթիվ թեկորմները¹⁵⁰: Բնականաբար «Արմենիա»-ն արձագանքել է նաև 1920-ականների սկզբներին տեղի ունեցած միջազգային խորհրդաժողով-ներին, սակայն 1920-1923 թթ. համարների մեծ մասը մեզ գտնել չհաջողվեց, հետևապես այդ մասին կարող ենք միայն ենթադրություններ անել:

Չորրորդ ենթագլուխ - Հայոց ցեղասպանության լուսաբանումը «Արմենիա»-ում:

«Արմենիա»-ն ներկայացրել է եղեռնին նպաստող գործուները, բացահայտել թուրքի մարդասպան եւրիյունը: Սեծ մասամբ օտարալեզու պարբերականներից արտաստանումների և թարգմանությունների միջոցով թերթի տեսաբանները եղեռնը բնութագրել են որպես մեծագույն ողբերգություն: Թերթի ներկայացմանը, զգալով նոտալուտ մայրանուտը, իշխանությունները երկիրը ոչ միայն վերածել էին ժողովուրդների սպանդանոցի, այլև անթափանց պարիսպներով ինքնապատվել էին, որպեսզի համաշխարհային հանրությունը չտեղեկանար հայ, ասորի, հույն ժողովուրդների դեմ ուղղված իրենց ոճրագործությունների մասին:

Արանձնահատուկ է այն, որ արդեն իսկ եղեռնի օրերին հայերին ուժազրկելու և ոչնչացնելու երեք փուլ կարևորելով՝ թերթն իրատեսորեն ներկայացնում էր այն պատճառները, որոնք հանգեցրին ցեղասպանության: Դրանք էին. ա)

¹⁴⁸ «Արմենիա», թիվ 28, 1913:

¹⁴⁹ «Արմենիա», թիվ 46, 1913:

¹⁵⁰ «Արմենիա», թիվ 23, 1921:

Եվրոպական տիրույթները կորցրած կայսրության համար, Բեռլինի վեհաժողովից հետո արևելյան հատվածում դրված էր ով-ումի հարցը, բ) հայությունը միակ պատնեշն էր պանթուրիզմի իրականացման ճանապարհին, գ) մեծ տերությունների երկիմի պահվածքն ու բողոքվությունը, դ) պատերազմով պայմանավորված՝ հարմար պահը, ե) «Թիւրքին ու Քիւրտին դեմ հայերու ինքնապաշտպանութեան միջոցներէ գուրկ գունուիլը»¹⁵¹, զ) հայ քաղաքական առաջնորդների անգործությունը, ինչը «կը նշանակէ ժողովուրդը էշ նահատակ դարձունելը»¹⁵², տ) թեև շատ փաստեր հետագայում միայն հայտնի դարձան, սակայն արդեն այդ շրջանում «Արմենիա»-ն խոսում էր գերմանացիների կողմից թուրքերին հովանավորելու մասին և Օսմանյան կայսրության «Գերմանիոյ կատուի մատն ու գործիքը ըլլալը»¹⁵³, ը) տեղահանության ոչնչով չպատճառաբանված լինելը, թ) ջարդարանների կողմից հարվածի սլաքը նախ և առաջ մտավորականության, ապա ՀՅԴ-ի և մյուս կարող ուժերի դեմ ուղղելը:

Եղեռնի մասին «Արմենիա»-ի միջոցով մեզ են հասել շատ հավաստի տեղեկություններ: Թերը ժխտում էր այն իհմնազորկ սուտը, որ իր հայերը հնագանու մորթվել են, և լուրեր էր հաղորդում մի շարք գավառներուն կազմակերպված հնքնապաշտպանական կոչվների մասին: «Արմենիա»-ն գրում է, որ առաջին հարվածից հետո ուշքի գալով հայերն ամենուրեք ինքնապաշտպանվեցին, սակայն հարվածն անսպասելի էր, իսկ ուժերը խիստ անհավասար էին:

Թերը հետագայում էլ էր ցեղասպանությանն անդրադառնում, բայց նախկին լալկան և օգնություն հայող հոդվածների կողքին երևում էին նաև Վրեժի ու մեղավորներին պատժելու կոչեր: Աշխարհը նաև «Արմենիա»-ի շնորհիվ տեղեկացավ համամարդկային ողբերգության՝ Եղեռնի մասին:

Ենթագույն հիմքերորդ- Դայ կամավորական շարժման արձագանքները «Արմենիա»-ում:

Դասկանալով, որ վստահելով երիտրուրքերին՝ անդառնալիորեն սխալվել էին, հայ քաղաքական դեկավարները տեր կանգնեցին կամավորական շարժմանը: Գոյության երկու տարիների ընթացքում այն իր հորձանուտի մեջ ներառավ ամբողջ հայությանը: «Արմենիա»-ն անմիջապես արձագանքեց շարժումը դեկավարող Ազգային բյուրոյի կամավորական շարժմանը ստուարելու կոչին, ստեղծեց Մարտելի Մասնաժողովը¹⁵⁴ և կազմակերպեց դրամահավաք:

Թերը նշում էր, որ այն արևմտահայության անվտանգության տեսակետից անարդյունավետ մարտավարություն էր և ազատագրական պայքարի կարևոր դրսուրում: Թերքի հոդվածագիրները կողմ էին շարժմանը, սակայն բանավիճում էին դրա նպատակների և արդյունքների շուրջ: Թերում շատ են հրապարակումները հայաշատ երկրներից կամավորների ժամանման, դրամ հանգանակելու և կամավորների բացառիկ քաջության մասին: Թերքի կարծիքով Դայկական հարցի լուծման համար ստեղծվել էր ամենահարմար պահը, քանի որ Ռուսաստանն ու Անգլիան, որոնց հակասությունները միշտ խանգարում էին դրան, դաշնակիցներ էին դարձել: Սակայն հետագա իրադարձությունները հերթական անգամ հուսախար արեցին հայությանը: 1915 թ. դեկտեմբերին, գգուշանալով հայերի ինքնապարական ձգումներից, ցարական հրամանատարությունը ցուց

¹⁵¹ Նույն տեղում:

¹⁵² Նույն տեղում:

¹⁵³ Նույն տեղում:

¹⁵⁴ «Արմենիա», թիվ 20, 1914:

կամավորական ջոկատները: «Արմենիա»-ն բարձր է գնահատել շարժումը, այն համարել իր տոկունությամբ և ապագայի նկատմամբ անսասան հավատով լի հայ մարդու սիրանք, հայկական ռազմական ուժի վերաստեղծիչ:

Ենթագույն վեցերորդ - «Արմենիա»-ի դիրքորոշումները հայ ազգային կուսակցությունների նկատմամբ:

Գոյության բոլոր 38 տարիներին «Արմենիա»-ն կուսակցական պարտադիրանքից գերծ մնաց և միշտ ընդգծեց, որ մասնավոր շահերը պետք է ստորադասվեն հայրենիքին: Երեմն թերթը քննադատում էր կուսակցությունների գաղափարական սխաները, դրական վերաբերվում որևէ քաղաքարական ուժի, սակայն ավելի հաճախ հրապարակում էր սոցիալիզմի ժամանակավրեավ լինելու և ցուցադրական ելույթների վնասակարության մասին օգուշացնող նյութեր: Քննադատելով «ընկերվարական խնդրով հայ ժողովուրդը յուզողը»¹⁵⁵ և երկրին անծանոր «փրկիչներից»¹⁵⁶, թերթը շեշտում էր, որ վերջիններս հաշվի չեն առնում այն իրողությունը, որ Օսմանյան կայսրությունում ո՛չ կապիտալիզմ կար և ո՛չ էլ դրա գերեզմանափորը: Թերթը քամիարական բնութագրումներով ցույց էր տալիս, որ ռամկավարները թեև հաճախ էին հայտարարում, որ հանրություն են և նվիրված են ժողովորի ցավերը դարմանելուն, սակայն լավագույն ուղին չեն ընտրել¹⁵⁷: Թերթն ավելի հանդուրժողական կեցվածք ուներ ՀՅԴ-ի նկատմամբ, որը երիտրութքական հեղաշրջումից հետո փոխվեց համակրանքի: Իսկ ինչ վերաբերում էր իրենց «Դաշնակցական» կուսակցութեան հետևողի համարելուն, ապա «Արմենիա»-ն ժխտում էր դա: Ընդգծենք, որ Ս. Փորթուգալյանն ու նրա թիմակիցներն այնքան էլ անկեղծ չեն: Երբ թերթում ես «Արմենիա»-ն, ապա XX դարի սկզբներից օգալի է աստիճանական թերումը դեպի Դաշնակցություն: Դետագյում ևս, հատկապես սահմանադրության հոչակումից հետո շարունակվում էր համակրանքը ՀՅԴ-ի նկատմամբ: Թերթի խմբագրակազմը շատ էր ոգևորվում, երբ տեղեկանում էր կուսակցությունների համագործակցության մասին:

«Արմենիա»-ն, իհմնականում մերժելով հնչակյանների ու դաշնակցության, իսկ ավելի ուշ նաև հայկական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների «հետափոխականությունը» և լինելով աստիճանական քարեփիդումների հավատավոր կողմնակից՝ միշտ մնաց անկուսակցականության դիրքերում:

Ենթագույն յոթերորդ - 1918-1920 թթ. իրադարձությունների լուսաբանումը «Արմենիա»-ում: «Արմենիա»-ն, աշխարհամարտի վերջում Լ. Զորից «ՀԱՅԱՍՏԱՆԸ, երբեք չափությունում մերժելու տիրապետութեան տակ դրուի»¹⁵⁸ հայտարարությունից ոգևորված և կարևոր դերակատարություն վերապահելով մտավորականությանը, գրում էր, որ հայ ժողովուրդը պիտի համախմբվի, օտարներին ներկայանա ոչ թե խեղին ու անճարի, այլ ուժեղի կերպարով, որպեսզի կարողանա ապահովել իր վաղվա օրը: Թերթը ողջունեց Յայաստանի անկախության հոչակումը և նրան սատարելու կոչով դիմեց համայն հայությանը: Սակայն Յայաստանի խորհրդայնացումը մի պահ շինթեցրեց թերթի խմբագրակազմին և երկրնորդանքի առջև կանգնեցրեց: Սակայն արագ կողմնորոշվելով՝ «Արմենիա»-ն հայտարարեց, որ «կը յարգէ Յայաստանի արդի

¹⁵⁵ «Արմենիա», թիվ 19, 1911:

¹⁵⁶ «Արմենիա», թիվ 21, 1911:

¹⁵⁷ «Արմենիա», թիվ 41, 1910:

¹⁵⁸ «Արմենիա», թիվ 23, 1918:

կառավարութիւնը»¹⁵⁹, բայց զգուշացնում է բոլորին զգոն լինել, քանի որ «Պօլշկիքները գուց տրամադիր լինին Շայաստանը վերադարձնելու Թիւրքերին»¹⁶⁰: Կրծկելով այն մտքից, որ Վերջապես հայակոր-ծան գործընթացը կկանգնեցվի, «Արմենիա»-ն ի վերջո ողջունեց Խորհրդային Շայաստանը և շտապեց տեղեկացնել, որ Ռուսաստանը զորաբանակ է ուղարկել՝ Շայաստանին պաշտպանելու նպատակով: Չնորանալով նաև արձանագրել, որ խաղաղարար ներկայացող բոլշևիկները սկսել էին հալածել դաշնակցականներին¹⁶¹: Թերթի տեսաբանները խոստովանում էին, որ «որքան Երոպային կառչեցանք, մեր ժողովրդի բաղդը արագօրեն դարձաւ դեպի արևելք»¹⁶²: Որքան հետամուտ եղանք անկախ պետություն ունենալուն, այնքան անկախությունը պակասեց, և անկախ Շայաստանին հաջորդեց կիսանկախ բոլշևիկյան Շայաստանը: Սակայն մի կողմում բոլշևիկյան Ռուսաստանն էր, մյուսում՝ Եղեռնագործ Թիւրքիան¹⁶³, հետևապես, նշում էր թերթը, պետք չէր սարսափել, որ «Շայաստանը բոլշևիկ է և Ռուսաստանին միացած»¹⁶⁴: Ընդհանուր առմանք, «Արմենիա»-ն հայոց պետականության վերականգնման և պահպանման համար պայքարում գրեթե միշտ իրատեսական դիրքերում էր կանգնած:

Եղրակացությունների մեջ ի մի են բերված աշխատության հիմնական եզրահանգումներն ու արդյունքները.

1. Ս. Փորբուգայյանի ողջ կյանքն ու գործունեությունը նպատակաւորված էին հայ ժողովրդին ազատագրական պայքարի դուրս բերելու նպատակի իրականացմանը: Նա չէր հանդուրժում Վախկոտներին և նյութապաշտումներին, իսկ լոկ խոսքով հեղափոխականներին ու զրաքարտողներին անարգանքի սյունին էր գամում: Մշտապես անձնական շահը ստորադասեց հայրենիքին, հանրավի մոռացումի ու մերժման պահեր ապրեց, սակայն միշտ մնաց իր ժողովրդի լավագույն ապագայի համար պայքարի պատճեշին: Ժամանակաշրջութանի ծնունդն էր, և հենց ժամանակաշրջանն էլ դրել է նրա կյանքի ու գործի վրա իր անջնջելի կնիքը: Ազնիվ է եղել և իրավացի: Երեմն նաև սխալվել է, որովհետև իր սերնդակիցներից շատերի նման սահմանափակ էր նրա աշխարհայացքը: Հենցելով նախորդների փորձի վրա և շարունակելով նրանց գործը՝ գրեթե միայնակ քաղաքավիրը ազգերին ներկայացրեց հայկական իրականությունը:

2. Որոշ ազդեցություններով հանդերձ՝ Ս. Փորբուգայյանի գաղափարախությունը, որն ամրողովին արևմտահայ իրականության ծնունդ էր, ազատագրական պայքարի ընթացքում իր գաղափարական-քաղաքական ըմբռնումների կարողության սահմաններում աստիճանաբար կատարելագործվեց: Նա դեպքերի վերլուծության ընթացքում երեմն անում էր մտահանգումներ, որոնք սուրբեկուվ տարրը առաջին դիրքի վրա էին դնում այս կամ այն պատճական կամ քաղաքական եղելության ճակատագրում և աշխարհներկալման ու տեսական-գաղափարական մեկնաբանությունների ժամանակ:

3. Զափակոր ազատական «Արմենիա»-ն իր գոյության տարիների հայության կյանքի տարեգիրն էր և իրականության անեղծ հայելին: Թերբն էական դերակատարություն է ունեցել հայությանը դարավոր նիրիկց դուրս բերելու, նրա

¹⁵⁹ «Արմենիա», թիվ 16, 1921:

¹⁶⁰ «Արմենիա», թիվ 24, 1917:

¹⁶¹ Նույն տեղում:

¹⁶² «Արմենիա», թիվ 10, 1921:

¹⁶³ Նույն տեղում:

¹⁶⁴ «Արմենիա», թիվ 23, 1918:

ցավն աշխարհալուր դարձնելու և հայության բոլոր հատվածներին միմյանց կապելու կարևոր գործում: Դժվար ու բարդ է եղել նրա անցած ուղին: Դայ ազատագրական պայքարի առանցքը դատինալու սկզբնական տարիների հավատը ժամանակի հետ աստիճանաբար թուլացավ: Սակայն անսասան մնաց կատարած գործի կարևորության գիտակցումը:

4. «Արմենիա»-ն մեծ արժեք է: Նրանում առկա են մեծաքանակ արդիական գաղափարներ հայրենիքի հանդեպ սիրո, հումանիզմի, ժողովրդավարության, կյանքի բարեփոխման ուղիների, համազգային վտանգ-արտագաղթի և այլ կարևոր խնդիրների մասին: Այն արժեքավորն ու գեղեցիկը, գործնականն ու հաղթելու արվեստի նրբությունները սովորեցնող դպրոց է, որի գաղափարներով կարելի է սերունդներ դաստիճարակել: Ընդհանրապես, հայ իրականության մեջ XIX դարի վերջին քառորդի մանուլը նաև կարևոր կրթական դեր խաղաց և մատնանշեց ապստամբություն տանող ճանապարհը: Այդ գործընթացում իր անուրանալի դերակատարումն ունեցավ նաև «Արմենիա»-ն:

5. «Արմենիա»-ն հայության վիշտ ու ցավի թարգմանն էր: Դատկապես հրատարակության առաջին տասնամյակում թերթը կարևոր դերակատարություն ունեցավ հայ ազգային-ազատագրական գաղափարախոսության հստակեցման գործում: Դարձավ ամբիոն, բանավեճի հրապարակ, որտեղ քննարկվում ու բանաձևվում էին ազատագրության ուղիները, մերժվում ցուցադրական գործողությունները, գալիք սերունդների համար ճանապարհ հարթում դեպի բարձակ ազատություն: Դրա համար էլ սիրված ու փնտրվող պարբերական էր և լուրջ ազդեցություն ուներ հայության շրջանում:

6. Առաջին տարիների մեծ տերությունների օգնության ակնկալիքով հայոց խնդիրը պարզաբանելու «Արմենիա»-ի կազմակերպած քարոզարշավին աստիճանաբար փոխարինեց սեփական ուժին ապավիճելու և զենքի ու հեղափոխության միջոցով ազատություն նվաճելու տեսլականը: Այսինքն՝ թերթը հայ ազատագրական պայքարը Եվրոպայից կախյալ համարելու ռազմավարությունն արդյունավետ չէր համարում:

7. Մ. Փորթուգալյանը լինելով արմենականների ուսուցիչն ու գաղափարական հայրը, երբեք չիամագործակցեց այդ կուսակցության հետ, որովհետև դեմ էր կուսակցականությանը, համարում այն ազատագրության գործին խիստ վնասակար: Վերջիններս, սակայն, այլ կարծիքի էին և մի քանի անգամ փորձեցին համոզել նրան, որ լին իրենց դեկավարը, համագործակցելու համար նույնիսկ հրավիրեցին ԱԱՆ, բայց ապարդյուն:

8. Աշխարհի բոլոր ժողովուրդների նման հայ ժողովուրդին էլ են բնորոշ եղել ոչ դրական հատկանիշներ: Սակայն համազգային ոգևորության ու հանուն գաղափարի շատերի զոկվելու համատարած պատրաստականության դիմաց դրանք չնշին մանրությներ էին: Այս պատկերացումն էլ ելակետ ունենալով, համազգային ցավի արտահայտիչ «Արմենիան» բոլորովին չանտեսելով դրանք՝ շեշտում էր, որ անհրաժեշտ է շտկել այդ թերությունները, դասեր քաղել սիսալներից ապագայում դրանցից զերծ մնալու համար:

9. «Արմենիա»-ի «Նամականին»-ին XIX դարի վերջին մեկուկես և XX դարի առաջին երկու տասնամյակների հայ իրականության կենդանի հուշարձան է, փաստառատ ու վստահելի սկզբնաղբյուր, մի կողմից հայի հոգու ճիշ, խտացած ցավ, բողոք ու պարսավանք անօրենների հասցեին, իսկ մյուս կողմից հայության երազանքների շտենարան ու զորավոր հավատ՝ ապագայի նկատմամբ:

11. «Արմենիա»-ն մեծ տերությունների նկատմամբ հստակ դիրքորոշումներ չուներ: Դայ ժողովորի ազատագրական պայքարի ընթացքում դրանց նկատմամբ թերի վերաբերմունքը հաճախակի փոփոխվում էր, նայած թե տվյալ պահին տվյալ պետությունն ինչպիսի դիրքորոշում էր որդեգրում Դայկական հարցի նկատմամբ: Դա միանգամայն բնական գործընթաց էր և հիմնականում, արդարացված: Ընդհանուր առմամբ «Արմենիա»-ն հայ իրականության մեջ այն փոքրարիկ պարբերականներից մեկը եղավ, որ երբեք չկորցրեց իրատեսության զգացումը, չապավինեց Եվրոպական տերությունների ու նրանց դիվանագետների սին խոստումներին և դրանով իսկ հիմնականում հայ հասարակայնության առաջնորդեց ծշմարիտ ուղիղով ու արժեքներով:

12. Սկզբուն երիտրությական սահմանադրությունը փառարանող «Արմենիան» շատ արագ էլ հասկացավ, որ դա խարկանք էր, հաշիշանման թմբիր՝ կայսրության տարածքում բնակվող հայտակ ժողովուրդների զգոնությունը թուլացնելու, ազատագրական պայքարից հետ պահելու և ցանկացած հարց իրենց ուղած ծևով լուծելու համար:

13. Եթե եղեռնի տարիներին «Արմենիա»-ն հստակեցնում էր, որ Դայկական հարցը ցեղասպանության միջոցով լուծելու օսմանյան իշխանությունների կանխակալ ծրագիրն էր և, անկախ այն հանգանանքից, հայերը ռուսական կողմնորոշում կունենային, ցուցադրական ելույթներ կամ կամավորական շարժում կնախաձեռնեին, այն կգործադրվեր: Ոճրագործությունների ժամանակակից «Արմենիա»-ի շնորհիվ մեզ եմ հասել զգալի թվով փառ փառարեցների, ականատեսների վկայություններ, միջազգային կառույցների ու անհատ գործիչների վերաբերմունքի մասին վկայող նյութեր:

14. «Արմենիա»-ն ողջունեց և հնարավոր բոլոր միջոցներով սատարեց կամավորական շարժմանը: Թերի հրապարակումներում հայունուն է ցեղասպանություն ապրած, հայրենազրկված, ընտանիք ու տունուտեղ կորցրած, սակայն իր կենսունակությամբ, ապրելու և արարելու տոկունությամբ աշխարհին մարտահրավեր նետած, ապագայի նկատմամբ անսասան հավատով լի հայ մարդու կերպարը:

15. Սոցիալ-տնտեսական խնդիրների մասին նվազ գիտելիքներ ցուցաբերող և հեղափոխականների կողմից կիրառվելիք հստակ ծրագիր չունեցող Փորբուգայանը հակադրվում էր հնչայքաններին և սոցիալիզմը ժամանակավեա համարում արևմտահայ իրականության համար: Նա ողջունում էր կուսակցությունների միջև յուրաքանչյուր համագործակցություն: Երբեմն, չնայած կուսակցականության մերժումներին, թերթը դրսևորում էր դաշնակցամետ պահվածք: Ընդհանուր առմամբ, հիմնականում մերժելով հնչայքանների ու դաշնակցության, իսկ ավելի ուշ նաև հայ սոցիալ դենոկրատական կուսակցությունների հեղափոխականությունը, աստիճանա-կան բարեփոխումների հավատավոր կողմնակից «Արմենիա»-ն միշտ մնաց անկուսակցականության դիրքերում:

16. Դայկական հարցը մշտապես եղել է «Արմենիա»-ի հիմնախնդիրներից: Դայկական բարենորոգումների նախագիծը Ռուսաստանի պահանջով ընդունելուց հետո գերիշխողը վերջինիս օգնությամբ և հովանավորությամբ հայկական ինքնավար կառույց ստեղծելու մտանությունն էր: Այդ տեսակետը որոշ չափով երերաց ՀՀ Արագին հանրապետության տարիներին, իսկ Դայաստանի խորհրդայնացումից հետո թերթը ոչ միայն արտահայտեց իր

համակրանքը, այլև հայության փրկությունը տեսավ ի դեմս Ռուսաստանի հովանավորությամբ ստեղծված Խորհրդային Հայաստանի:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հետևյալ հրապարակումներում.

ա/ Մենագրություններ

1. Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921թ.), Ե., «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2009, 242 էջ:

2. 1885-1908 թթ. հայ ժողովորի ազգային-ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ, Ե., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010, 120 էջ:

3. «Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Ե., «Անտարես» հրատարակչություն, 2014, 680 էջ:

4. Периодическое издание „Армения“, у истоков армянской национально-освободительной идеологии,, Институт Социальных Наук, Москва, 2015, 201 стр.

բ/ Հոդվածներ

1. Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն, Հայ ազգային ու Ամորկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914 թթ.), Ե., ԵԳԵԱ հրատարակչություն, 2003, էջ 110-130:

2. Միքայել Նարենյանի և Փանոս Թերլենեզյանի պատմագիտական հայեցակարգերը Վրմենական կուսակցության և հայ ազատամարտի վերաբերյալ, «Պետություն, պատմություն, տնտեսություն, մշակույթ», Երևանի Գլածոր համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների չորրորդ գիտիական նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., Գլածոր համալսարան, 2009, էջ 171-183:

3. Սարգսյան Ս., Համբարյան Ա., Վրմենական կուսակցություն, Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. Երկրորդ կես-XIX դ. Վերջ), Ե., «Զանգակ-97», 2010, էջ 482-491:

4. Սարգսյան Ս., Կանի 1895 թ. հերոսական ինքնապաշտպանությունը, Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. Երկրորդ կես-XIX դ. Վերջ), Ե., «Զանգակ-97», 2010, էջ 557-562:

5. Վրմենական կուսակցության պատմության դասավանդման գիտամեթոդական առանձնահատկությունները բուհերում, «Հյուսիսափայլ» գիտ. հոդվ. ժող. Հյուսիսային համալսարանի հրատ., Ե., 2010, էջ 129-133:

6. Արամ Մանուկյանը Կանի 1915 թ. հերոսական ինքնապաշտպանության կազմակերպիչ և ղեկավար, Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (հոդվածների ժողովածու), Ե., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010, էջ 18-25:

7. Հնչակյան կուսակցության հիմնադրման պատմության հաղերի լուսաբանում ըստ Խանազատի հուշերի, «Ակունք» գիտ. հոդ. ժող., թիվ 1, ԵՊՀ հրատ. (Իջևանի մասնաճյուղ), 2011, էջ 31-40:

8. Վաչե Ղազարյան՝ Վրմենական կուսակցության պատմագիր, «Գլածոր-20» հոդվածների ժողովածու, Ե., 2011, էջ 507-526:

9. Կանի հերոսամարտը, Հայաստանի մայրաքաղաքները, գիրք I, Կան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2013, էջ 163-170:

- 10.** 1885-1908 թթ. հայ ժողովորի ազգային-ազատագրական պայքարը Ս. Սասպահ-Գյուլյանի գնահատմամբ, «Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2011, թիվ 12, էջ 223-237:
- 11.** 1885-1908 թթ. հայ ազգային-ազատագրական պայքարը Ս. Վարանյանի գնահատմամբ, «Ալկունք», ԵՊՀ իշխանի մասնաճյուղ, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1 (7), ԵՊՀ հրատարակչություն, Ե., 2013, էջ 7-23:
- 12.** «Արմենիա» թերթի Շրջաբերականը, Նոր Գլածորը գիտության բավկաներում (Երևանի Գլածոր համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների վեցերորդ գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու), Ե., 2013, «Խոյան տապան», էջ 251-272:
- 13.** Հայ իրականության և հանրային կյանքի թերություններն ըստ «Արմենիա» պարբերականի, «Ալկունք» ԵՊՀ իշխանի մասնաճյուղ, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1(10), ԵՊՀ հրատարակչություն, Ե., 2014, էջ 15-33:
- 14.** Հետսահմանադրական Թօւղթիան և «Արմենիա» պարբերականը (Հայաստան. Ցեղասպանությունից վերածնունդ 1915-2015, Երևանի Գլածոր համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և հայցրդների՝ ցեղասպանության 100-ամյա տարելիցին և Երևանի Գլածոր համալսարանի հիմնադրման 25-ամյակին նվիրված յոթերորդ գիտ. նստ. նոդ. ժողո.), «Խոյան Տապան Ցոլիկնօք» հրատ., Ե., 2015, էջ 491-510:
- 15.** Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության կազմավորումը, «Լրաբեր հասարակական գիտությունների հանդես», թիվ 1 (583), Ե., 1992, էջ 35-48:
- 16.** Կերակազմյալ հնչալյան մանուլի պատմությունից («Մարտ», «Խոր Կեանք»), «Լրաբեր հասարակական գիտությունների հանդես»ս, թիվ 2(590), Եր., 1995, էջ 107-115:
- 17.** Արմենակ Եկարյանի պատմագիտական հայացքները, «Էջմիածին», Ս. Էջմիածին, մայիս, 2008, էջ 98-110:
- 18.** 1885-1908 թթ. հայ ժողովորի ազգային-ազատագրական պայքարը Արտակ Դարրինյանի գնահատմամբ, «Լրաբեր հասարակական գիտությունների հանդես», թիվ 2 (622), Եր., 2008, էջ 46-57:
- 19.** 1885-1908 թթ. հայ ժողովորի ազգային-ազատագրական պայքարը Արսեն Կիտուրի գնահատմամբ, «Լրաբեր հասարակական գիտությունների հանդես», թիվ 3 (626), Եր., 2009, էջ 3-19:
- 20.** 1885-1908 թթ. հայ ազգային-ազատագրական պայքարը Յրանդ Գանգրունու գնահատմամբ, «Լրաբեր հասարակական գիտությունների հանդես», թիվ 1-2 (630), Եր., 2011, էջ 3-20:
- 21.** Հայկական հարցը և Հայ Սահմանադրական ռամկավարները, «Հայագիտության հարցեր», ԵՊՀ հրատ., թիվ 2, Ե., 2014, էջ 67-82:
- 22.** Հայ մամուլը 217 տարեկան, «Զարթօնք բացարիկ», Պեյրութ, 2011, էջ 17-124:
- 23.** Հայոց մեծ Եղեռնի արտացոլումը «Արմենիա» պարբերականի էջերում 1885-1923 թթ., «Լրաբեր հասարակական գիտությունների հանդես», թիվ 2, Ե., 2015, էջ 62-77:
- 24.** Armenian periodical, the herald of national liberation struggle, Europe & Orient, N Janvier-Juin 2013, institute TCHOBANIAN, pp. 75-81.

САРГСЯН СУРЕН ТАРХАНОВИЧ
ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ МКРТИЧА ПОРТУГАЛЯНА
И ГАЗЕТА «АРМЕНИЯ»

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук по
специальности 07.00.01 “История Армении”

Защита состоится 29-ого марта 2016., в 14⁰⁰ на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте истории Национальной академии наук РА, по адресу: 0019, г. Ереван, проспект Маршала Баграмяна 24/4.

РЕЗЮМЕ

В результате русско-турецкой войны 1877–1878 годов Османское правительство, лишившись европейских территорий, сконцентрировало всё своё внимание на восточной части империи и усилило давление, направляя основной удар на армян. Не желая более терпеть угнетение, армянский народ встал на борьбу, чтобы сбросить невыносимое иго. Среди представителей интеллигенции, возглавившей пробуждение народа и разработку идеологии освободительной борьбы, достойное место занял Мкrtич Португалян.

Мкrtич Португалян всю свою сознательную жизнь посвятил делу воспитания молодого поколения, поиску путей спасения западных армян. Свою патриотическую деятельность он начал в 1880-х годах. М. Португалян основал “Арааратский”, “Вараздатский” и другие общества в Константинополе, активно сотрудничал с передовой прессой, редактировал газету “Масис” и ввиду прогрессивных взглядов был подвергнут преследованиям со стороны правительства. Будучи в Тбилиси, он встретился с Г. Ариуни и Раффи. В дальнейшем, благодаря их общению и сотрудничеству, сформировалось единство в освободительной мысли и борьбе восточных и западных армян. Переселившись в Ван по совету последних, М. Португалян развернул плодотворную педагогическую деятельность, воспитывая отважное – готовое к борьбе целое поколение. Одновременно Португалян стал основоположником идеи создания партии “Арменакан” в армянской действительности.

Особое место в деятельности М. Португаляна занимала газета “Армения”, основанная в Марселе в 1885 году. Будучи изгнаником, лишённый материальных средств, М. Португалян с небольшой группой своих последователей, ценой больших жертв, смог на протяжении 38 лет издавать газету “Армения”. Этот первенец армянской политической прессы стал зеркалом, отражающим истинную картину жизни – социально-политическое тяжелое положение, боль и страдания армянского народа.

“Армения” была свободна от партийных и других обязательств, не имела чётко определенного и незыблемого политического направления. На протяжении первого десятилетия выхода в свет, газета часто представляла революционные подходы, однако в дальнейшем стала более осторожной идержанной. Несмотря на то, что иногда в

газете публиковались призывы к перевороту, она в основном оставалась сторонницей умеренно - либеральных, частичных преобразований.

Кроме основных редакторских статей, которые писал сам М. Португалян, “Армения” имела так же другие постоянные разделы: “Намакани” (“Письма”), “Армянский вопрос”, “Гахташхар” (“Диаспора”), “Обзор печати”, “Филологический”, “Реклама”. Газета освещала множество вопросов, волнующих народ. Публикации передавали богатую информацию о тяжелом социально – экономическом положении армянского народа, о его бесправном, невинно осужденном и постоянно незащищенном состоянии.

В публикациях “Армении” четко определялись мировоззренческие взгляды М. Португаляна относительно проблемы освобождения западных армян. Как и С. Зарян, М. Португалян представлял статус армянина раздвоенным. В политическом смысле он считал армянина турком, а с точки зрения культуры - армянином и старался примирить общегосударственное и национальное начала. Однако по истечении обстоятельств в убеждениях М. Португаляна гражданин-османец постепенно уступил место национальному деятелю. В публикациях газеты заметны преобразования, происходившие в течение национально – освободительной борьбы. На первом этапе последней монастырский вардапет уступил место светскому учителю, на втором – труженик-учитель стал редактором, а затем – агитатором революции.

“Армения” освещала так же множество других вопросов, беспокоивших всех армян. Целые страницы газеты были уделены критике партийных идеологий, Армянскому вопросу, добровольческому движению, Геноциду, провозглашению независимости, созданию большевистской Армении и другим вопросам. Газета часто представляла реалистические, здоровые подходы, однако иногда была далека от точности и определенности. Со всеми своими недостатками газета “Армения” стала знаменательным явлением в жизни армян.

Целью данной работы было восполнение пробела - исследование неизученной истории газеты “Армения”.

**SARGSYAN SUREN TARKHAN
THE SOCIAL-POLITICAL ACTIVITIES OF MKRTICH PORTUGALYAN
AND THE NEWSPAPER “ARMENIA”**

Dissertation for the degree of the Doctor of Science (History)
on the specialization of “History Armenia” 07.00.01

The defense of the dissertation will be held on March 29, 2016, 14^{oo} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

SUMMARY

The Ottoman Empire, having lost its European territories as a result of the Russian-Turkish war of 1877-1878, attracted its attention to the eastern parts of the Empire and aggravated pressure especially on Armenians. Being unable to stand the repressors any more, Armenians rose for liberation struggle. Mkrtich Portugalyan was one of the representatives of the Armenian intelligentsia that had a great role in development of the liberation ideology.

Mkrtich Portugalyan devoted all his life to the education of the new generation and searched for ways to save Western Armenians. He started his patriotic activities since 1880s. M. Portugalyan founded the “Araratian”, “Varazdatyan” Societies in Constantinople, worked with progressive periodicals of the time, edited the newspaper “Masis”, etc. He was persecuted by authorities for his progressive views. Being in Tiflis he met G. Artsruni and Raffi. Close links between the Eastern and Western Armenian liberation ideas and struggle were established later thanks to Portugalyan’s cooperation with them. Having moved to Van M. Portugalyan began his educational activities and brought up a courageous - ready to fight generation. Simultaneously he became the initiator of the idea of establishment of the Armenakan Party.

The newspaper “Armenia” was established in Marcel in 1885 by M. Portugalyan and took a special place in his activities. Being outcaste and having no money Portugalyan did his best with a few followers to publish the newspaper “Armenia” at the price of great sacrifices for the space of 38 years. Being the first Armenian political periodical it became the mirror reflecting the real picture of the Armenian life - the hardest social-political conditions, pain and sufferings of the Armenian people.

“Armenia” was free from party and other obligations and did not have defined political direction. In the period of the first ten years of publication, the newspaper had revolutionary approaches but it became more cautious later. Although, sometimes the newspaper called for revolution, it mainly remained as a supporter of limited liberal and gradual changes.

Besides the main part of the newspaper- the editorials written by M. Portugalyan, “Armenia” had also other constant sections: “Letters”, “The Armenian question”, “Diaspora”, “Press Review”, “Philology”, “Advertisement” and others. The newspaper elucidated a lot of problems troubling Armenians. The articles introduced rich information

about the hard social-economical condition of Armenians, their deprived position - without any rights and unprotected life.

M. Portugalyan's points of views on the problem of liberation of Western Armenians were presented in the publications of "Armenia". He, like S. Zaryan, introduced bifurcation in the status of Armenians: from political point Armenians were Turks but culturally they were Armenians. M. Portugalyan tried to unite the state and national lines. Eventually, the Ottoman citizen inside of him gave up its position to national figure. His converting, that took place during development of the National Liberation Struggle, also can be seen in the articles. During the first period the vardapet - monastery pedagogue converted to the secular teacher. During the second period the teacher became the editor and then the agitator of revolution.

"Armenia" also discussed a lot of questions regarding Armenians. Many pages of newspaper were devoted to the criticism of Party ideologies, Armenian question, volunteer movement, Genocide, Declaration of Independence, the establishment of Bolshevik Armenia, etc. Despite the shortcomings, "Armenia" had a significant place in the Armenian reality.

The history of the newspaper "Armenia" was not studied entirely till now. The goal of this research was to fill up that gap.